Azg
armenian daily

Դեկտեմբեր 23 Դեկտեմբերի 1992

օրաթերթ
Բ տարի, թիւ 153 (246)
գինը՝ 2ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Շրջափակում

Վառելանյութ Իրանից

Մոտ ժամանակներս Հայաստանի վառելիքային շրջափակումը Իրանի շնորհիվ կդադարեցվի: Հայաստանին մատակարարվող Ռուսաստանի վառելանյութը, որը նախատեսված է առեւտրա տնտեսական պայմանագրով, Հայաստան կառաքի Իրանը: Այն պետք է տանկերներով Աստրախանից տեղափոխվի իրանական էնզելի ֆաղաքը եւ օգտագործվի տեղական կարիքների համար: Փոխարենը իրանական կողմը Հայաստանին կտրամադրի նույն քանակությամբ իր վառելանյութը: Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հաղորդեց էկոնոմիկայի նախարարության մամուլի կցորդ Գեւորգ Ստեփանյանը, մատակարարումների մասին հարցը Ռուսաստանի իշխանությունների հետ վերջնականապես համաձայնեցվել է Հայաստանի էկոնոմիկայի նախարար, վարչապետի առաջին տեղակալ Հրանտ Բագրատյանի վերջերս Մոսկվա կատարած այցելության ընթացքում: Այդ շրջանցիկ ճանապարհի նշանակությունը շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար դժվար է գերագնահատել, ասաց նա: ■

ՀՀ

ՄԱԿ-ի պատվիրակությունը մեկնեց

Վերջացնելով իր աշխատանքները, երեկ Երեւանից մեկնեց ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի եւ պարենի ու գյուղատնտեսության կազմակերպության պատվիրակությունը, որը Հայաստանում էր գտնվում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի համաձայնությամբ, պարզելու պարենի բնագավառում ազգաբնակչության առաջնային կարիքները եւ երկարաժամկետ համագործակցության ուղղությունները: Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել շահագրգիռ կազմակերպությունների հետ եւ միայն հանրագումարի բերելով հավաքած տեղեկությունները, որոշել է մեկնել: ■

Իրանում բացվեց Հայաստանի դեսպանատունը

Երեկ Թեհրանում տեղի ունեցավ Հայաստանի դեսպանության բացման հանդիսավոր արարողությունը: Հայաստանի փոխնախագահ Գագիկ Հարությունյանի եւ Իրանի արտգործնախարարի առաջին տեղակալ Մահմուդ Վայեզիի ողջույնի խոսքից հետո Թեհրանում հայկական թեմի արքեպիսկոպոս Արտակ Մանուկյանը օրհնեց դեսպանատան շենքը:

Իրանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար է նշանակվել Վահան Բայբուրդյանը: ■

Բեյրութում նույնպես կբացվի, սակայն մայիսին

Ինչպես մեր թղթակցին հաղորդեց Հայաստանի արտգործնախարարության ներկայացուցչությունների բաժնի վարիչ Էդուարդ Խոջայանը, հնարավոր է, որ մայիս ամսին Բեյրութում բացվի Հայաստանի դեսպանատուն: Պրն. Խոջայանը 2 օր առաջ է վերադարձել Բեյրութից, որ նա հանդիպել է Լիբանանի արտգործնախարարության ընդհանուր քարտուղարի փոխանորդ Զաֆեր Էլ Հասանին: Զրույցի ընթացքում քննարկվել է երկու երկրների միջեւ քաղաքական հարաբերությունների զարգացման, ինչպես նաեւ մինչեւ մայիս ամիս Բեյրութի մեջ Հայաստանի դեսպանատուն բացելու մասին հարցերը: Պրն. Խոջայանը նշեց, թե լիբանանյան կողմին առաջարկվել է նաեւ քննարկել Հայաստանում Լիբանանի դիվանագիտական ներկայացուցչություն բացելու հարցը, որը գոնե կաստի հյուպատոսական ֆունկցիաներ:

Իսկ առայժմ բեյրութահայ համայնքում կազմված հանձնախումբը սկսել է դրամահավաք Հայաստանի դեսպանատանը աջակցելու նպատակով: Ա.Հ.

Ռազմաճակատ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԳՐՈՀ ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Ինչպես տեղեկացնում է «Սնարք» գործակալությունը, երեկ առավոտյան ադրբեջանական բանակի կազմավորումները լայնածավալ գրոհ են ձեռնարկել Հայաստանի Կրասնոսելսկի շրջանի ուղղությամբ: Ըստ Հայաստանի պաշտպանության նախարարության տվյալների, ադրբեջանական կողմից այդ գործողությանը մասնակցել է մեծ քանակությամբ մարտական տեխնիկա եւ կենդանի ուժ: Գրոհն ուղեկցվել է Կրասնոսելսկ ավանի ուժգին հրետակոծությամբ: «Գրադ» կայանքներից եւ ծանր հրետանուց հրետակոծվել են նաեւ Հայաստանի հյուսիս-արեւելքի այլ բնակավայրեր:

Կեսօրին ադրբեջանական հեծեւակը հրետանու օժանդակությամբ փորձել է մոտենալ հայկական պաշտպանական դիրքերին: Ավելի ուշ Հայաստանի պաշտպանության նախարարությունից տեղեկացրեցին, որ ադրբեջանական բանակի գրոհը ետ է շրջվել: Թշնամին դուրս է մղվել Հայաստանի տարածքից եւ նահանջել Գեսարքեկի շրջանի ուղղությամբ՝ մարտաշաչում թողնելով մի քանի տասնյակ դիակներ, հինգ զրահամեքենա եւ երկու խփված տանկ: Թշնամուց առգրավվել է մեծ քանակությամբ զինամթերք: Մարտական գործողությունների ընթացքում ազատագրվել է Վահան գյուղի մերձակա բարձունքը, որը բռնամին գրավել էր առավոտյան: Մարտական գործողությունները դադարել են երեկ ժամը 16:30-ին: Ըստ նույն աղբյուրների, հայկական կողմից 6 զինվորներ վիրավորվել են:

Հայաստանի մյուս սահմանամերձ շրջաններում իրադրությունը համեմատաբար հանգիստ է եղել: Հատուկենտ կրակոցներ են հնչել միայն Կաղանի շրջանի սահմանամերձ գյուղերի ուղղությամբ: Տուժածներ չկան:

Ղարաբաղ. Քելբաջարի շրջանում մեծ կուտակումներ

Ինչպես Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից Վահրամ Աղաջանյանը, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի տվյալների համաձայն վերջին օրերին իրադրությունը Լեռնային Ղարաբաղում շարունակում էր մնալ համեմատաբար հանգիստ: Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի եւ Հադրութի շրջանների ռազմաճակատներում առանձին փոխհրաձգություններ են եղել:

ԼՂՀ զինված ուժերի հետախուզության տվյալների համաձայն Ադրբեջանի Քելբաջարի եւ Ղուբաթլիի շրջաններում նկատվում են ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումներ: Չի բացառվում, որ ադրբեջանական կողմը Քելբաջարի շրջանի տարածքից լայնածավալ գրոհ է նախապատրաստում: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան:

Մինչդեռ ինչպես հայտնում են Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից, դեկտեմբերի լույս 22-ի գիշերը եւ երեկ առավոտյան Ջեբրայիլի շրջանի գյուղերը գնդակոծվել եւ հրետակոծվել են հայկական կազմավորումների կողմից: Այդ նույն շրջանում հայկական ուժերը գնդակոծել են շտաբ օգնության մեքենան: Տուժածներ չեն եղել: ■

Բարու

Ամերիկացի դիվանագետները բախման գոտում

Ամերիկացի դիվանագետները սկսել են մեծ հետաքրքրություն ցուցաբերել հայ-ադրբեջանական սահմանագծի Իջեւանի եւ Ղազախի շրջանների միջեւ ընկած հատվածին, որ վերջին ամիսների ընթացքում ի տարբերություն հակամարտության այլ գոտիների տիրում է համեմատաբար խաղաղ իրավիճակ:

Հայաստանում ԱՄՆ-ի գործերի ժամանակավոր հավատարմատար Թոմ Փրայսն այցելեց այդ շրջանն իր գործընկեր, Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Ռիչարդ Մայլզից հետո, որը մի քանի օր առաջ այցելել էր Ղազախի շրջան:

«Թուրան» գործակալությանը տված հարցազրույցում Ռիչարդ Մայլզն ասաց, որ հետաքրքրությամբ էր հետեւում, թե ինչպես դաշտային հրամանատարների եւ տնտեսական իշխանությունների մակարդակով իրականացվում էր հայկական եւ ադրբեջանական կողմերի համագործակցություն: «Ժողովրդական դիվանագիտության փորձն օգտակար կլիներ երկարաձգված հակամարտության լուծման համար», գտնում է ամերիկացի դիվանագետը: ■

Երեւան

Ծանր զենքերը դուրս են բերվում Մոգադիշոից

Սոմալիում մրցակից զինյալ երկու խմբավորումների ղեկավարները՝ Այդիդ եւ Ալի Մահդիներն սկսեցին իրենց ծանր զենքերը դուրս հանել մայրաքաղաք Մոգադիշոից, համաձայն դեկտեմբերի 11-ին ամերիկյան զորախմբի հրամանատարության միջնորդությամբ կայացած պայմանավորվածության: Երկու կլանների պետերը պարտավորվել են 48 ժամվա ընթացքում մայրաքաղաքից դուրս բերել բնդանոթներն ու մյուս ծանր զենքերը:

Միլոշեւիչը Սերբիայի նախագահ

Չայների 50 տոկոսից ավելին հավաքելով Սերբիայի նախագահ Միլոշեւիչը վերընտրվեց, հաղթանակ տանելով նախկին Հարավսլավիայի վարչապետ կալիֆորնիացի բիզնեսմեն Պանիչի նկատմամբ: Վերջինս պահանջեց չեղյալ նկատել ընտրությունների արդյունքը, պնդելով խախտումների մասին:

Կոիվները վերաբռնկվեցին Կամբոջայում

Մեկ տարի տեւած համեմատական անդորրից հետո երեկ անօրինակ սաստկությամբ վերաբռնկվեցին կռիվները Պնոմ Պենի ուժերի եւ կարմիր կխմերների միջեւ: Փոխադարձ ռմբակոծումներից տուժեցին հատկապես երկրի հյուսիս-արեւմտյան շրջանները: Արդեն իսկ կան 10 հազար փախստականներ: ՄԱԿ-ը կոչ արեց դադարեցնելու կռիվը:

Հնդկաստանի վարչապետը վստահության քվե ստացավ

Բհարատիա ջանատա ազգայնական հինդու կուսակցության կողմից վարչապետ Ռաոի կառավարության դեմ խորհրդարանում բարձրացված անվստահության հարցը չանցավ. վարչապետը հեշտությամբ ստացավ վստահության քվե, սակայն ստիպված եղավ որոշ զիջումների գնալ հիշյալ կուսակցության նկատմամբ, որը մեղադրվում է դեկտեմբերի 6-ին Այոդհյայում մզկիթի կործանումը հրահրելու հանցանքով: Կուսակցությունն իրավունք ստացավ հանրահավաքներ կազմակերպելու:

Կոլորի դաշը հեռաձգվեց

Բրազիլիայի նախագահ Կոլորի իմպիչմենտի դաշը, որը տեղի էր ունենալու երեկ, մեկ շաբաթով հետաձգվեց, երբ վերջին պահին նա պարտականություններից ազատեց իր դաշտաշաչողներին: Նախագահի հաղթական հակառակորդներն այդ քայլը եւս մի փորձ նկատեցին կաբառակերության ամբաստանությամբ դատավարությունից խուսափելու:

Լոնդոն-Երեւան-Դուբայ ավիաուղե՞ր

Ինչպես մեր թղթակցին հաղորդեցին Հայաստանի արտգործնախարարության մամուլի կենտրոնում, նախարարության ավիացիայի եւ տրանսպորտի ենթաբաժինը, նկատի ունենալով անգլիական մի ֆիրմայի առաջարկը, պատրաստել եւ Հայաստանի կառավարությանն է ներկայացրել մի տեղեկագիր, որում նշվում է, թե հնարավոր է իրականացնել նոր ավիաուղերթ՝ Լոնդոն-Երեւան-Դուբայ: Առայժմ կառավարությունը ոչ մի պատասխան չի տվել: ■

Մերձավոր Արեւելք

Մինչ պաղեստինցիները փորձում էին վերադառնալ, իսրայելյան դատարանը հաստատեց նրանց արտաքսումը

415 պաղեստինցիները, որոնք անցյալ շաբաթ բռնի արտաքսվել էին Իսրայելից դեպի Լիբանան, որտեղից նրանց հետ էին մղել դեպի «անվտանգության գոտի», փորձ կատարեցին վերադառնալ գրավյալ հողեր: Սակայն սահմանագլխին իսրայելյան բանակը ականանետային կրակով նրանց չթողեց առաջանալ, վիրավորելով նրանցից երկուսին:

Իսրայելի Գերագույն դատարանը, որ երկու տարով նրանց արտաքսման վճիռ էր արձակել, երեկ լսեց վճռաբեկման դիմումները, սակայն ընթացք չտվեց դրանց:

415 պաղեստինցիներ ներկայումս գտնվում են լիբանանյան-եւ իսրայելական սահմանի վրա, բացօթյա պայմաններում, ամրացված 3 բանակների կողմից՝ իսրայելյան, լիբանանյան եւ Իսրայելի դրածո Լահդի բանակի միջեւ:

Մյուս կողմից, գրավյալ հողերում երեկ շարունակվեց պաղեստինցիների հայտարարած բողոքի գործադուլը, անդամալուծելով Իսրայելի բազմաթիվ շրջաններ: ■

Արգենտինա

Հայ համայնքը դիմել է նախագահ Մենեմին

Ինչպես մեր թղթակցին հաղորդեցին Հայաստանի արտգործնախարարությունում, արգենտինահայ համայնքը դիմել է Արգենտինայի նախագահ Մենեմին Հայաստանի Հանրապետությանը մարդասիրական օգնություն ցույց տալու առաջարկով:

Միեւնույն ժամանակ Հայաստանի արտգործնախարարությունը նոտա է հղել Մոսկվայում Արգենտինայի դեսպանությունն, որում խոսք է գնում Հայաստանի եւ Արգենտինայի միջեւ կապիտալ ներդրումների խրախուսման եւ կրկնակի հարկումից փոխադարձ պաշտպանության պայմանագիր ստորագրելու մասին: ■

Էլչիբեյի այցը Ղազախստան հետաձգվեց

Հետաձգվել է Ադրբեջանի նախագահ Էլչիբեյի դեկտեմբերի 22-ին Ղազախստան կատարելիք այցը: Ինչպես «ԻՏԱ»-ին հայտնեցին նախագահի մամուլի ծառայությունում, այցի հետաձգման պատճառը իրադրության սրումն է Ադրբեջանի Զանգելանի շրջանում, որտեղ հայկական ուժերը շարունակում են իրենց ձեռքին պահել ադրբեջանական մի քանի գյուղ: Ինչպես հայտնել են Բաքվում, հայկական զորքերի Ադրբեջանի արեւմտյան շրջաններ կատարած ներխուժման հետեւանքով ավելի վաղ չեղյալ էր հայտարարվել հանրապետության խորհրդարանի նախագահ Իսա Ղամբարովի անցյալ շաբաթ օրն Իրան կատարելիք այցը: ■

Դուսակցական

ՀՌԱԿ Հանրաքեսական վարչությունում

ՀՌԱԿ Հանրաքեսական վարչության դեկտեմբերի 19-ին եւ 21-ին կայացած նիստերում քննարկվեց ՀՀ Գերագույն խորհրդում հանրաքեսության նախագահի հաղորդումը:

Հանրաքեսական վարչությունը ճիշտ համարեց ՀՀ ԳԽ ՀՌԱԿ խմբակցության հանրաքեսության նախագահի հաղորդման վերաբերյալ կարծիքի տեսքի մանրամասն ուսումնասիրությունից հետո հայտնել որոշումը:

Ելույթ ունեցողները շեշտելով, որ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթում հիմնականում ճիշտ էր բնութագրված հանրաքեսության ներկա սոցիալ-տնտեսական վիճակը, միաժամանակ նշեցին, որ հաղորդման մեջ բացակայում էին առկա դրության պատճառների վերլուծությունը եւ հետագա գործողությունների հստակ շարադրումը:

Անդրադառնալով հանրաքեսության նախագահի կողմից իրավիճակի կայունացման վեց կետերին, վարչության անդամները գտնելով, որ դրանք ուշադրության արժանի եւ ինչ-որ տեղ ընդդիմությանն ընդառաջ գնալու ցանկություն արտահայտող առաջարկություններ են, միաժամանակ ընդգծում էին, որ այդ կետերից մի քանիսը պարզապես տրամաբանական հակասության մեջ են մտնում միմյանց հետ, մասնավորապես սահմանադրության եւ տեղական ինքնակառավարման մասին օրենքի արագ ընդունման նախագահի առաջարկը: Սակայն ակնհայտ է, որ վերջինիս հիմնական դրույթներն ինքնաբերաբար պարզ կլինեն միայն Հայաստանի Հանրաքեսության հիմնական օրենքը հաստատելուց հետո:

Ի մի բերելով վարչության անդամների կարծիքներն ու առաջարկությունները, որոշվեց ՀՀ ԳԽ ՀՌԱԿ խմբակցության հետ համատեղ նիստ գումարելով ճշգրտել կուսակցության վերջնական դիրքորոշումը հանրաքեսության նախագահի տարեկան հաղորդման նկատմամբ: ■

Քրեական

Կողոպտված զանգերը Հայաստանում

Մի քանի ամիս առաջ Թբիլիսիի տաճարի կողոպտված զանգերը հայտնաբերվել են Հայաստանի տարածքում: Զանգերը կողոպտել են այդ հանրաքեսության քաղաքացիները: Կողոպտիչներից մեկը ձերբակալվել է Հայաստանի Ալավերդու շրջանի ոստիկանության օգնությամբ: Մնացած երկուսը փնտրվում են:

Տնտեսություն

Սիսարյան. «ԱՊՀ երկրների աղագան կախված է Ռուսաստանից»

«ԱՊՀ երկրների տնտեսության աղագան, դրանց բարեփոխումների հաջողությունն այսօր կախված է Ռուսաստանի նոր կառավարությունից», Երեւանի ձեռնարկություններին տնօրենների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց տնտեսագետ, ակադեմիկոս Ստեփան Սիսարյանը: Նա նշեց, որ Ռուսաստանը վարելով հստակ ֆինանսահաշվարկային քաղաքականություն, պետք է նպաստի ԱՊՀ երկրների տնտեսական համագործակցությանը: Այլապես, նշեց նա, յուրաքանչյուր հանրաքեսություն կբարունակի վարել կոշտ ֆորմալացված տնտեսական քաղաքականություն:

«1993 թ. պետք է դառնա նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ինտեգրացման տարի», հայտարարել է Սիսարյանը: ■

ԼՂՀ

Պատերազմ եւ առօրյա հոգսեր

Պատերազմից հյուծված ղարաբաղցի մանուկները վերջին 4 տարում առաջին անգամ կունենան ամանորյա տոնածառ: Նրանց հյուր կգան Ձմեռ պապը եւ Ձյունանուշիկը, բերելով երեխաների վաղուց մոռացած քաղցրավենիքները՝ թխվածքաբլիթ ու կոնֆետ, մանդարին ու չիր:

«Միայն թե մեր մանուկների տրամադրությունը չփչացնեն ոմբակոծումներն ու հրետակոծումները», «Սնարք»-ի թղթակցի հետ իր տագնաղը կիսեց ԼՂՀ ժողովրդական կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Նելլի Ոսկանյանը: Նա հայտնեց, որ տոնածառի, ուրախ խաղերի եւ տոնական ներկայացումների համար Հայաստանի լուսավորության նախարարությունը եւ հստակ ծրագրերի կոմիտեն հատկացրել են 6 միլիոն ռուբլի:

Արցախցի երեխաների ձմեռային հանգստի հոգսը սանձձնել են մոսկվացիներ եւ ռիգացիներ, կիեւցիներ եւ երեւանցիներ: Այդ քաղաքներում Նոր տարին կդիմավորեն 300-ից ավելի դեռահասներ, որոնց ծնողները զոհ են գնացել արդեն չորս տարի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ շարունակվող չհայտարարված պատերազմին: «Երկիրը տրոհվել է, բայց մարդկանց հոգիները բարեբախտաբար պահպանվել են: Լավ է, որ գոնե դրանք քաղաքագետները չեն կառավարում», շարունակեց Նելլի Ոսկանյանը:

ԼՂՀ իշխանություններն այն կարծիքին են, որ բարձրլեռնային Շուշի քաղաքը դարձյալ հայտարարեց տնտեսագետ, ակադեմիկոս Ստեփան Սիսարյանը: Նա նշեց, որ Ռուսաստանը վարելով հստակ ֆինանսահաշվարկային քաղաքականություն, պետք է նպաստի ԱՊՀ երկրների տնտեսական համագործակցությանը: Այլապես, նշեց նա, յուրաքանչյուր հանրաքեսություն կբարունակի վարել կոշտ ֆորմալացված տնտեսական քաղաքականություն:

«1993 թ. պետք է դառնա նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ինտեգրացման տարի», հայտարարել է Սիսարյանը: ■

Բրյուսել

ՆԱՏՕ-ի խորհրդի հայտարարությունը

Ինչպես արդեն հաղորդվել է, Բրյուսելում դեկտեմբերի 17-18-ը կայացած ՆԱՏՕ-ի խորհրդի նստաշրջանում մերժվել է Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման ադրբեջանական նախագիծը: Ահա մի հատված նստաշրջանի որոշումից. «Կետ 14. Մենք խորապես ցավում ենք Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ շարունակվող դիմակայության առթիվ: Մենք հակամարտության մասնակից կողմերին կոչ ենք անում հաստատել արդյունավետ հրադադար: Մենք լիովին պաշտպանում ենք ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի սկզբունքները, ինչպես նաեւ տվյալ հակամարտության առնչությամբ ԵԱՀԽ-ի բոլոր քայլերը եւ ընդունած որոշումները: Մենք շարունակում ենք հավատալ, որ ԵԱՀԽ-ի նախատեսված խորհրդաժողովը անմիջական հնարավորություն կընձեռնի այդ հակամարտության խաղաղ կարգավորման համար...»:

Դիպուածում

Տարեմուտին կրկին գազ չկա

Դեկտեմբերի լույս 22-ի գիշերը կրկին դադարեցվեց Հայաստանի գազամատակարարումը: Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հայտնեց հանրաքեսության կառավարության մամուլի կենտրոնի ղեկավար Վլադիմիր Մանոյանը, առայժմ անհայտ պատճառով նախօրեին կտրուկ նվազել է ճնշումը Վրաստանի տարածքից Հայաստան մտնող գազատարում:

Մինչդեռ այս գիշեր Երեւանում դիտվել է 10 աստիճան, իսկ աղեյալ գոտում՝ 25 աստիճան ցուրտ: ■

Վիճակը Հայաստանի համար հետաքրքրություն է ներկայացնում նախեւառաջ իր տնտեսական բարեփոխություններով, երեկ հայտարարեց ԱԳՆ աշխատակից Վարդան Ոսկանյանը, որը Հայաստանի տեսական պատվիրակության հետ եղել էր ՎՍՀ-ում: Նա ասաց նաեւ, թե Վիեննայից Հայաստանի զենք գնելու մասին պտտվող լուրերը բացարձակապես իրական չեն:

Ինչպես մեր թղթակցին հայտնեց Հայաստանի կառավարության լրատվական ծառայության ղեկավար Վլադիմիր Մանոյանը, դեկտեմբերի 21-ին սողանքի հետեւանքով երկաթուղու Սանահին-Քոբեր հատվածի շուրջ 100 մետրանոց մի հատված ծածկվել է փլվածքով: Կատարվում են մաքրման եւ նորոգման աշխատանքներ: Երթեւեկությունը կվերսկսվի դեկտեմբերի 23-ից:

Ֆինանսներ

Բագրատյան. Ռուսաստանն ստիպում է մեզ սեփական դրամ ստեղծել

Ռուսաստանը կստիպի Հայաստանին որպես առաջնահերթ խնդիր քննարկել ազգային դրամ ստեղծելու հարցը, շաբաթ օրը հայտարարել է ՀՀ առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Հրանտ Բագրատյանը: Նրա խոսքերով, ինքն արդեն այդ կապակցությամբ նախագահ Տեր-Պետրոսյանին է հանձնել հաշվետվություն: «Այդ ստիպողական քայլին Հայաստանը կդիմի միայն այն դեպքում, եթե ԱՊՀ երկրների ղեկավարների մթնոլորտ հանդիպմանը չընդունվի ռուբլու էմիսիան եւ ֆինանսավարկային քաղաքականությունն իրացնող ԱՊՀ միջպետական բանկի ստեղծման որոշումը», հայտարարեց նա: ■

ՊԱՐԱՀԱՆԴԵՍ-ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայ երիտասարդության համազգային կենտրոնը 1993 թ. հունվարի 2-ից մինչեւ հունվարի 10-ը, ամեն օր ժամը 18:00-ին Ազգային օպերայի եւ բալետի թատրոնում կազմակերպում է Սուրբ Ծննդյան եւ Ամանորի շքեղ տոնահանդեսներ:

ՇՔԵՂ ՍՊԱՍԱՎՈՒՄ Է ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

Բազմազան խաղեր, հումոր եւ երգիծանք, ջազային եւ էստրադային երաժշտության ունկնդրումներ, անակնկալ հանդիպումներ, թատրոնի, կինոյի, մարզաշխարհի նշանավոր գործիչների, ինչպես նաեւ հումորի եւ երգիծանքի վարպետների հետ:

ՊՈՒՉ ԿՄԱՍՆԱԿՑԵՔ ՎԻՃԱԿԱՒՈՐ ՏՈՆԱՀԱՆԴԵՍԻՆ

Եթե ուսանողությունը եւ առանձին կազմակերպություններ ցանկանում են միայն իրենց կոլեկտիվով անցկացնել տոնական երեկոն, ապա համազգային կենտրոնը կընձեռնի այդ հնարավորությունը՝ տրամադրելով նրանց առանձին օր:

Շտապեցեք այս հաճելի առիթը բաց չթողնելու

Հայերն ընդունվում են ս.թ. նոյեմբերի 10-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը, Աբովյան փողոց 9, 3-րդ հարկ, 2-րդ սենյակ, հեռախոս՝ 52.77.45:
Մնացած տոմսերը վաճառվում են բոլոր համերգասրահների եւ «Այրարատ» կինոթատրոնի տոմսարկղներում:

Բաքու

Աշխատունակ բնակչության 27 տոկոսը անգործ է

Ադրբեջանի աշխատունակ բնակչության 27 տոկոսը գործազուրկ է: Այդ մասին «ԻՖ»-ին հայտնեց հանրաքեսության ֆինանսների նախարար Սալեհ Մամեդովը: Նրա խոսքերով, տուկայական հարաբերությունների անցնելիս Ադրբեջանի գործազուրկների թիվը կտրուկ կաճի: Մասնավորապես, նախարարի խոսքերով, կառավարական աղարատը հանրաքեսությունում ենթադրվում է կրճատել 30 տոկոսով: Ս. Մամեդովը նաեւ հայտնել է, որ մոտ ժամանակներս հանրաքեսությունում ռուբլին լիովին կփոխարինվի ազգային դրամանիշով՝ մանաթով: Այդ ձեռնարկումը, նշել է նախարարը, Ռուսաստանի հետ կհամաձայնեցվի միջկառավարական այն համաձայնագրին համապատասխան, որն ստորագրվեց այս տարվա հոկտեմբերին Ռուսաստանի կառավարության ղեկավարի պատասխանատու եզոր Գայդարի Բաքու կատարած այցի ժամանակ:

ԱԺՁ-ը դատապարտում է

Ադրբեջանի ժողովրդական ճակատի գործադիր կոմիտեն հանրաքեսության իշխանություններին կոչ արեց օգտագործել բոլոր առկա միջոցները քաղաքացիների իրավունքները պաշտպանելու եւ ահաբեկչությունը կանխելու համար: Հրապարակված հայտարարության մեջ ԱԺՁ-ն դատապարտեց «Նոր Ադրբեջան» կուսակցության փոխնախագահ պրոֆեսոր Մուրթուզ Ալեսքերովի դեմ կատարած բռնությունը եւ «Թուրան» անկախ աշխատավորների միության օրգան «Մեյդան» թերթի խմբագրության ավերումն անհայտ անձանց կողմից: Հայտարարության մեջ նշվում է, որ այդ գործողությունները հրահրում է ինչ-որ երրորդ կողմ, որը նպատակ ունի սրել հարաբերություններն իշխանությունների եւ ընդդիմության միջեւ:

Նախիջեւանը Թուրքիային վառելանյութ է վաճառում

Բաքվում Նախիջեւանի Ինքնավար Հանրաքեսության լիազոր ներկայացուցիչ Զեյնալովը հերքեց լրատվության մի շարք միջոցների հաղորդագրությունը, թե Բաքվից Նախիջեւան ուղարկվող վառելիքը հետագայում վերավաճառվում է Թուրքիային: «Նախիջեւանի վառելիքի օրական պահանջը 450 տոննա է, որից բավարարվում է միայն 10 տոկոսը: Ուստի հիմարություն է պնդել, որ Բաքվից ստացվող չնչին առաքումները հնարավոր է վերավաճառել հանրաքեսությունից դուրս», ասաց Զեյնալովը:

Չեն միանա ԱՊՀ միջպետական բանկի մասին պայմանագրին

Ադրբեջանի կառավարության փոխվարչապետ Վահիդ Ահմեդովը «Թուրան»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ ասաց, որ հանրաքեսությունը մտադիր չէ միանալ Մինսկում կնքվելիք պայմանագրին: «Ադրբեջանն ԱՊՀ անդամ չէ եւ բոլոր փոխհաշվարկներն իրականացնում է էլիրինգային հիմունքներով», ասաց փոխվարչապետը: Ինչպես հաղորդեց Վ. Ահմեդովը, ներկայումս ավարտվել են ազգային վալյուտային անցնելու հիմնական նախապատրաստական միջոցառումները:

Կրթաթոշակը 2500 ռուբլի

Աբուլֆազ Էլչիբեյի դեկտեմբերի 19-ի հրամանագրով 1993 թ. հունվարից Ադրբեջանի ուսանողների կրթաթոշակը կլինի նվազագույն աշխատավարձի չափով՝ 250 մանաթ կամ 2500 ռուբլի: Ասպիրանտների կրթաթոշակը կլինի 2 նվազագույն աշխատավարձի չափով:

Բաքուն խնդրում է հանձնել ներխուժման գործը

Ռուսաստանի խորհրդարանի փոխնախագահ Սերգեյ Ֆիլատովը Ադրբեջանի միլիի մեջլիսի փոխնախագահ Թամերլան Կարաեւից ստացել է ուղերձ, որով խնդրանք է արտահայտվում աջակցել 1990 թ. հունվարի լույս 20-ի գիշերը խորհրդային զորքերի Բաքու մտնելու փաստին առնչվող քրեական գործի 69 հատորները Ադրբեջանի դատախազությանը հանձնելուն: Այդ քայլի հետեւանքով սպանվել եւ վիրավորվել էին հարյուրավոր մարդիկ: ■

Քրեական

Կողոպտված զանգերը Հայաստանում

Մի քանի ամիս առաջ Թբիլիսիի տաճարի կողոպտված զանգերը հայտնաբերվել են Հայաստանի տարածքում: Զանգերը կողոպտել են այդ հանրաքեսության քաղաքացիները: Կողոպտիչներից մեկը ձերբակալվել է Հայաստանի Ալավերդու շրջանի ոստիկանության օգնությամբ: Մնացած երկուսը փնտրվում են:

Վաճառվում են կահավորված տնակներ: Մակերեսը 30 քառ. մ.: Հեռ. 26-34-92

Քրեական

ԱԺՄ-ն կներկայացնի հակաճգնաժամային ծրագիր

Երեկ կայացած մամուլի ասուլիսում ԱԺՄ խորհրդարանական խմբի անդամներ Շավարշ Քոչարյանը, Դավիթ Վարդանյանը, Սեյրան Ավագյանը, Արշակ Սադոյանը ներկայացրին իրենց պատգամավորական խմբի մեկ տարվա գործունեությունը եւ հիմնականում անդրադարձան Հայաստանի նախագահի տարեկան հաղորդմանը:

«Նախագահի հաղորդումը դրական փաստ է այն առումով, որ առաջին անգամ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ կոնկրետ փաստերով, անդրադարձավ հանրաքեսության սոցիալ-տնտեսական վիճակին», ասաց Շավարշ Քոչարյանը: Միեւնույն ժամանակ նա նշեց այն կետերը, որոնք հանրաքեսության նախագահը անտեսել էր իր հաղորդման մեջ:

Նախ այն, որ գտնվում ենք պատերազմի մեջ, 2. ազգական դոկտրինայի հարցը, 3. Լեռնային Ղարաբաղի Հանրաքեսության հարցը, 4. հանրաքեսությունում տիրող բարոյահոգեբանական վիճակը, 5. մարդու իրավունքների հարցը, 6. իրավական պետության կառուցման հարցը: Խոսելով նախագահի կողմից նշված Սահմանադրության նախագծի մասին, պրն. Քոչարյանը նշեց, թե սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած նախագիծը խայտառակություն է եւ չի համապատասխանում Սահմանադրության պահանջներին: Պատգամավորի կարծիքով առաջին անգամ նախագահի շուրթերից լուրջ քննադատություն լսվեց կառավարության հասցեին, բայց հետաքրքիրն այն է, որ նախագահը հենց ինքն է կանգնած գործադիր իշխանության գլխին եւ ինքն է նշանակում կամ հանում պետնախարարներին: ԱԺՄ-ի ներկայացուցիչները ստեղծված իրավիճակից դուրս գալու սահմանադրական ելքը համարում են այն, թե պետք է նախ պարզել ինչպիսի պետություն պետք է լինի անկախ Հայաստանը: Այս կողմից ԱԺՄականներն առաջարկում են երկու կարեւոր կետ ճգնաժամից դուրս գալու համար. առաջինը, Գերագույն խորհրդի բարեփոխումներ, որոնց խոչընդոտում են ԳԽ նախագահը եւ ՀՀՇ պատգամավորական խմբակցությունը, երկրորդ, լիազորությունների վերաբաշխում եւ կոալիցիոն կառավարության ստեղծում: Դավիթ Վարդանյանը նշեց, թե ԱԺՄ-ն առաջիկա խորհրդարանական նիստերին կներկայացնի իր հակաճգնաժամային ծրագիրը, որի հեղինակն է Տիգրան Սարգսյանը:

Ծրագիրն առաջին հերթին կխթանի տնտեսական աճին եւ ոչ թե ֆինանսական կայունացմանը:

Իսկ Արշակ Սադոյանի կարծիքով ԱԺՄ-ի առաջարկը չընդունելու պատճառով Հայաստանը միայն այս տարի ունեցավ 70 մլրդ. ռուբլու կորուստ:

Վերջում պատգամավորներն այն միտքը հայտնեցին, որ Հայաստանում քաղաքականությունը կփոխվի, եթե «այդ խմբակը» հեռանա իշխանության ասպարեզից:

Ա. Հ.

Բաքուն խնդրում է հանձնել ներխուժման գործը

Ռուսաստանի խորհրդարանի փոխնախագահ Սերգեյ Ֆիլատովը Ադրբեջանի միլիի մեջլիսի փոխնախագահ Թամերլան Կարաեւից ստացել է ուղերձ, որով խնդրանք է արտահայտվում աջակցել 1990 թ. հունվարի լույս 20-ի գիշերը խորհրդային զորքերի Բաքու մտնելու փաստին առնչվող քրեական գործի 69 հատորները Ադրբեջանի դատախազությանը հանձնելուն: Այդ քայլի հետեւանքով սպանվել եւ վիրավորվել էին հարյուրավոր մարդիկ: ■

digitised by A.R.A.R.@

Գներ

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ ՄՈՄԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ստնում եմ Չարենցի փողոցի ղարենային խանութը, վաճառում բրվասեր կա՝ 55 ռուբլի արժեքով, մի այլ տեղում՝ «Այրարատ» (նախկին «Ռոսիա») կինոթատրոնի մոտ նույն բրվասերը 48 ռուբլի արժե, Նալբանդյան փողոցի վրա 47 ռ., երրորդ մասում բոլորովին այլ գին ունի՝ 50 ռ.: Ո՞րն է դատճառը, բվում է նույն խանութներն են, նույն՝ ջրից իր խտությամբ ֆիչ տարբերվող բրվասերը, նույն արտադրողը:

Գների եւ գնագոյացման մեխանիզմին ծանոթանալու նպատակով դիմում եմ Երեւանի քաղխորհրդի առեւտրի վարչություն, դեսի տեղակալ Հենրիկ Հովհաննիսյանը մի շարք դարզաբանումներ է տալիս:

Դարգվում է, դեռեւս գործում է դեսական առեւտուր եւ դեսական առեւտրի օբյեկտներ հասկացությունը: Այդ օբյեկտները՝ ղարենային եւ արդյունաբերական խանութները, մատակարարվում են արտադրողների կողմից կամ աղրանքը ստանում են բազաներից:

Ստացվող աղրանքի մեծածախ գնին, որը նշանակվում է արտադրողի կողմից, ավելացվում է վաճառքի եւ վաճառողի համար նախատեսված վերադիր հարկը՝ մինչեւ 1992 թ. հունվարը 20 տոկոսի չափով, այժմ որեւէ սահմանափակում չկա: Այսինքն, առեւտրի համակարգին տրված են անսահմանափակ հնարավորություններ ձեռք բերված աղրանքը սեփական հայեցողությամբ վաճառել 10-ից մինչեւ 100 եւ ավելի տոկոս վերադիրով: Միակ կարգավորող մեխանիզմը տվյալ ղարագայում բնակչության գնողունակությունն է, որը խիստ առաձգական է եւ տարբեր խավերի մոտ տարբեր չափերի:

Պրն. Հովհաննիսյանը մի վերադահում արեց միայն, որ մանկական տեսականին աշխատում են վաճառել շատ ցածր վերադիրով՝ վաճառքից ընդամենը 10-30 տոկոս վերադիր գանձելով:

Սակայն տարբերություններ կան նաեւ դեսական առեւտրի կետերում: Այն խանութները, որոնք անցել են տնտեսվարկի, այսինքն, իրավաբանական անձի կարգավիճակ են ստացել, առեւտրական հարաբերությունների մեջ են մտնում անմիջականորեն դեսության հետ: Մինչդեռ նման կարգավիճակ չունեցողներն աղրանքը ձեռ են բերում քաղաքի միջոցով: Ուստի եւ խանութը, եւ գնորդը համատեղ մի ավելորդ օղակ էլ են կերակրում: Իրավաբանական անձ համարվող խանութները իրենք են վճռում աղրանքի գինը, բեւ առեւտրի վարչությունն ունի գների բաժին, իսկ առեւտրի նախարարությունն էլ Նախարարների խորհրդի հետ համատեղ որոշ դարենային աղրանքների գներն ինքն է վճռում: Դա վերաբերում է հատկապես կտրոնավորված եւ դրսից ներմուծվող աղրանքներին: Իսկ գների նկատմամբ հսկողությունն իրականացվում է հարկային տեսչության կողմից մշակված որոշակի մեխանիզմով, խախտումների հայտնաբերման դեպքում մեծ տուգանքների գանձմամբ սփոփելով հետեւել սահմանված կարգին:

Գների դրոգրեսիվ աճը քաղաքային առեւտրի վարչությունում բացատրում են ոչ թե առեւտրական հիմնարկների կամայականություններով, այլ օբյեկտիվ դատճառներով, որոնցից ամենավճռորոշը ճանապարհածախսի աճող գներն են: Եթե անցյալ ամիս Հայաստան աղրանք բերելու համար մեկ ինքնաթիռ վարձելն արժեր 1.2 միլիոն ռուբլի, ապա այս ամիս արդեն 2.5 միլիոն: Այդ է դատճառը, որ նախորդ ամիս կտրոնով շաքարավազը վաճառվում էր 56 ռուբլով, իսկ այսօր վաճառվելու է 120 ռուբլով: Կարագը վաճառվում էր 240 ռուբլով, այժմ կվաճառվի 350-ով: Ինչ վերաբերում է ալյուրին, Նախարարների խորհրդի կողմից որոշված է վաճառել հացի գնին համարժեք գնով՝ 30 ռուբլով:

Պրն. Հովհաննիսյանը նաեւ հաղորդեց, որ կտրոնները մարելու համար ժամկետ չի սահմանված, դրանք ուժի մեջ են նաեւ հունվարին, ընդ որում դեկտեմբերի գներով: Գների «աննախադեպ աճի» մասին հանրապետության նախագահի կանխատեսումն ամանորյա կտրոնների վրա չի տարածվելու:

Նախատոնական առեւտրի մասին առեւտրի վարչության դեսի տեղակալը նաեւ հայտնեց, որ ազատ վաճառքում կլինեն մակարոնեղեն, կարամել, եփած երշիկ: Ինչ վերաբերում է նախապես հայտարարված մսի 500 գրամից բաշխմանը, այն չի լինելու: Քանի որ հանրապետությունը նման ռեսուրսներ չունի, իսկ միայն Երեւանին անհրաժեշտ կլինի 650 հազար տոննա միս:

1992-93 թթ. երեւանցիների ամանորյա սեղանները աղքատիկ կլինեն, քան երբեւէ: Սակայն ցավալի է, որ մեր բնակարաններն էլ ավելի անբնակ կլինեն, քան երբեւէ: Քանի որ այս տարի վաճառքում չեն լինելու տնածառեր՝ ոչ արհեստական (տնածառեր արտադրող միակ՝ Գորիսի գործարանը դադարեցրել է արտադրությունը), ոչ բնական (դրսից բերովի): Չեն լինելու նաեւ տնածառի խաղալիքներ (չնչին քանակով բերվել են Ռուսաստանից եւ առատաբերական գներով վաճառվելու են խանութներում): Նման գներով խաղալիք գնել անկարող կլինեն ոչ միայն շատ ծնողներ, այլ շատ կազմակերպություններ: Մեզ մնում է մոմի լույսի ներքո մեր մանուկներին դատմել ժամանակին կազմակերպվող ամանորյա ուրախ հանդեսների մասին մեր հուշերը եւ ժամը 12-ին նրանց մաղթել «երկար ապրեք, գոնե մեզ դես ապրեք»:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Ռուբլու գոտի

Միջդետական բանկը կնդաստի հաշվարկներին

ՀՀ Կենտրոնական բանկի կառավարչի առաջին տեղակալ Հենդել Ստեփանյանը հայտնել է, որ ԱԴՀ երկրների միջդետական բանկը ստեղծվում է ռուբլու գոտու երկրների միջեւ հաշվարկների կազմակերդման համար: Հեռանկայում հաշվարկներ կկատարվեն նաեւ նախկին Խ. Միության այն երկրների հետ, որոնք չեն մտնում ռուբլու գոտու մեջ: Դա իր էությամբ լինելու է այնդիսի բանկ, որը կարգավորելու է միջդետական հաշվարկները: Ռուսաստանը ձգտում էր, որ ձայները դետությունների միջեւ բաժանվեն ըստ նրանց աղրանքային արտահանման ծավալի, սակայն «մենք ձգտում ենք, որդեսզի ձայները հավասար բաժանվեն: Մենք արդեն ստորագրել ենք բանկի ստեղծման նախնական փաստաթղթերը, երբ դետությունների ղեկավարներն էլ համաձայնության գան, մենք անմիջապես ձեռնամուխ կլինենք բանկի ստեղծմանը», ասաց Ստեփանյանը: ՆՏ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ

«Դիանա» մարզա-համերգային դահլիճում դեկտեմբերի 25-ից մինչեւ 1993 թ. հունվարի 13-ը կազմակերպում է ամանորյա հրաժշտական զվարճալի հանդիսաներ մանուկների համար:

Մոսկվյան կրկեսի արտիստների եւ վարժեցրած կենդանիների մասնակցությամբ:

Սկիզբը՝ ժամը 10, 12, 16-ին: Հայտերն ընդունվում են նոյեմբերի 10-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը, Աբովյան փողոց 9, 3-րդ հարկ, 2-րդ սենյակում եւ երկարուղայինների մշակույթի դալատում, հեռախոս՝ 52.77.45:

Մնացած տոմսերը վաճառվում են բոլոր համերգասրահների եւ երկարուղայինների մշակույթի պալատի տոմսարկղներում:

ԴՏ Հոսք

Կառավարության որոշումը չի կատարվում

ՀՀ վառելիքի եւ էներգետիկայի փոխնախարար, Հայէներգոարդ դետական ձեռնարկության տնօրեն Մելս Հակոբյանը հայտնեց, որ հանրապետության վառելիքաէներգետիկ համալիրում հայտարարված արտակարգ իրավիճակի դայմաններում հսկողությունը ոչ մի արդյունք չի տալիս: «Հսկողության իրականացման համար ներգրավված իրավաբան մարմինները հայտնաբերում են արտակարգ իրավիճակը խախտող օբյեկտներ եւ սահմանված կարգով են բարկում տուգանքների: Սակայն հաջորդ օրը դատմությունը կրկնվում է: Անհրաժեշտ է ավելի խիստ միջոցներ ձեռնարկել, քանզի կառավարության որոշումը փաստորեն չի կատարվում», ասաց նա:

Մոտ 2 տասնյակ ածխային եւ այրվող թերթաքարերի երեւակումներ

ՀՀ ընդերքի դետական վարչության ոչ մետաղական օգտակար հանածոների բաժնի դետ Արթուր Օհանյանը հաղորդեց, որ էներգետիկ ճգնաժամի սկզբնավորման հետ մեկտեղ այս տարի վերսկսվել են Հայաստանում քարածի դատարների որոնումները: Որոշ տեղամասերում որոնումների հետ զուգահեռ կատարվում է նաեւ արդյունահանում: Հանքերն անհրաժեշտ է մասնագիտորեն շահագործել, որդեսզի հանքավայրը շարից դուրս չգա եւ վնաս չհասցնի բնադահդանությանը: Գոյություն ունեցող մոտ 2 տասնյակ ածխային եւ այրվող թերթաքարերի երեւակումներից առաջին փուլում ընտրված են ամենից հեռանկարաշնորհները, որտեղ կատարվում են երկրաբանահետախուզական եւ աշխատանքներ:

Նավթը եւ գազը Հայաստանում չեն բացառվում

ՀՀ ընդերքի դետական վարչության երկրաֆիզիկայի եւ վառելիքաէներգետիկ դատարների բաժնի դետ Ռաֆիկ Միրիջանյանը հաղորդեց, որ նավթի եւ գազի որոնման յուրահատկությունը թույլ է տալիս որոշ չափով դյուրին դարձնել նրանց համատեղ որոնումների աշխատանքները: Այդ աշխատանքները կատարվեն այնքան ժամանակ, քանի դեռ գիտականորեն չի բացառվել նավթի եւ գազի առկայությունը Հայաստանում: Միրիջանյանը հաղորդել է նաեւ, որ հայտնի դատճառներով այդ աշխատանքի ուժգնությունը զգալիորեն նվազել է:

Աշխատանքները ընթանում են հին տեղամասերում

ՀՀ ընդերքի դետական վարչության մետաղական օգտակար հանածոների բաժնի դետ Ալբերտ Մաթեւոսյանը հայտնեց, որ երկրաբանական աշխատանքները նախկին տեմդերով չեն ընթանում: Կան հեռանկարային տեղամասեր, սակայն վառելիքի բացակայության եւ սահմանափակ շրջանների անադահով վիճակի դատճառով չի հաջողվում հիմնովին ուսումնասիրել դրանք: Հեռանկարային տեղամասերի գնահատականն իսկ դժվար է որոշել: Աշխատանքները շարունակվում են միայն հին տեղամասերում, բայց զգալիորեն ցածր տեմդերով:

Հավանաբար տախտաֆոնները կլինեն ժետոններով

Քաղաքային հեռախոսային ցանցի արտադրական միավորման գլխավոր ինժեներ Էդուարդ Հակոբյանը տեղեկացրեց, որ Երեւանում կա մոտ 3 հազար ավտոմատ հեռախոս, որ գտնվում են վատթար վիճակում: Օրական շարից իջնվում է 50-60 խոսափող, կոտրվում 4-5 հեռախոս, այնտեղից դուռ հանելու նդատակով: Հակոբյանը հայտնեց նաեւ, որ իրենք հարկադրված են սեփական սուղ միջոցներով վերանորոգել այդ հեռախոսները: «Մենք նույնիսկ ցանկանում էինք տախտաֆոններից օգտվելը դարձնել ձրի, որդեսզի փրկեինք նրանց հոտոտումից, բայց, հավանաբար, ավտոմատ հեռախոսների շահագործումը կիրականացվի ժետոններով, բեւ այժմ քննարկվում են այլ տարբերակներ եւ նախագծեր», ասաց Հակոբյանը: ■

Մոսկվա

Ստորագրվեց հյուդատոական կոնվենցիա

Երեկ, դեկտեմբերի 22-ին Մոսկվայում ստորագրվեց հյուդատոական կոնվենցիա Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ: Այն ստորագրեցին ՀՀ արտգործնախարարի դատասխանատու Արման Կիրակոսյանը եւ ՌԴ արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը: Տեղի ունեցավ երկու նախարարների զրույց՝ ՌԴ ժողովրդական դատգամավորների մասնակցությամբ: Այնուհետեւ Անդրեյ Կոզիրեւը ճաշկերույթ տվեց Արման Կիրակոսյանի դատվին: ՆՏ

Գիտական կյանք

Նոր ինստիտուտ Երեւանում

Չնայած Հայաստանում գիտության ընդհանուր ճգնաժամին, Երեւանում ստեղծվել է դեկավարման ավտոմատ համակարգերի նոր գիտահետազոտական ինստիտուտ: Այն գործում է Երեւանի մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի հիմքի վրա: Գ.Հ.Ի-ի տնօրեն Ռոբերտ Աբոյանը հայտնեց, որ ինստիտուտը կդատասարկի հանրապետության մարտավարական նշանակության վարչություններին: Միաժամանակ ինստիտուտին հանձնարարվել է նախկին ռազմական գործարանների աղաառազմականացման նախագծերի մշակումը: «Սնարֆ»-ի փորձագետների կարծիքով, Գ.Հ.Ի-ի ստեղծումը Հայաստանի գիտատեխնիկական համակարգի փրկության փորձ է, բայց աղշեցնում է աղաառազմականացման նախագծերի համար հատկացված չնչին գումարը՝ 70 հազար ռուբլի: ■

Երեւան

Հայաստանում «Ընտանիքի տարին» կնշվի, սակայն...

Ինչդես մեզ հայտնի դարձավ, Հայաստանի Հանրապետության վարչապետ Խոսրով Հարությունյանի դեկտեմբերի 12-ի թիվ 582 կարգադրությամբ ՄԱԿ-ի գլխավոր համաժողովի 1989 թվականի դեկտեմբերի 8-ի 1994 թվականը ընտանիքի միջազգային տարի հռչակելու մասին բանաձեւի կադակցությամբ ստեղծվել է ընտանիքի միջազգային տարվա (ԸՄՏ) անցկացման ազգային համակարգող հանձնաժողով, որի մեջ մտել են. ՀՀ աշխատանքի եւ սոցիալական աղահովության նախարար Ա. Եսայանը (նախագահ), առողջադահության նախարար Ա. Բաբլոյանը, հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների դետական վարչության դետ Ս. Գեւորգյանը, ֆինանսների նախարարի տեղակալ Մ. Երանոսյանը, մշակույթի նախարար Հ. Մովսեսը, կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ն. Հակոբյանը, արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Մ. Հարությունյանը, էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ա. Ղազարյանը, լուսավորության նախարար Հ. Ղազարյանը եւ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Նավասարդյանը:

Հանձնաժողովին հանձնարարվել է մեկամսյա ժամկետում մշակել ընտանիքի միջազգային տարվա անցկացման միջոցառումների ծրագիր «Ընտանիք, ռեսուրսներ եւ դատասխանատվություն փոփոխվող աշխարհում» նշանաբանով եւ առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հիմնած կամավոր հիմնադրամին (ստեղծված տարբեր երկրներում ԸՄՏ-ի անցկացման ֆինանսավորման համար) դրամական ներդրում կատարելու մասին:

Այսդիսով, որդես «դրամական» արդյունք դետք է արձագանքել, որ 1992 թ. մարտի 2-ից ՄԱԿ-ի անդամ դարձած Հայաստանի կառավարությունը վերջադես որոշեց միանալ այդ հեղինակավոր միջազգային կազմակերդության կարեւոր միջոցառմանը: Թեեւ դժվար թե այն իր նդատակին ծառայի, քանզի ՄԱԿ-ում ընդունելով ընտանիքի տարի սահմանելու անհրաժեշտությունը, գլխավոր համաժողովի մասնակիցները հասկանալով խնդրի ողջ բարդությունը եւ նախապատրաստական աշխատանքների հսկայական ծավալը, սահմանեցին չորս տարվա ժամկետ:

Հայաստանում ընտանիքի խնդիրները հատկապես վերջին տարիներին բավականին խորացել են, հասարակության հիմնական բջջի առողջացման համար լուրջ ուսումնասիրությունների եւ երկարատեւ գործունեության միջոցառումների ծրագրերի անհրաժեշտությունն այսօր առավել քան հրատապ է: Սակայն կարդալով կարգադրությունը, այն տդավորությունն է ստեղծվում, որ ՀՀ վարչապետը մտադիր է ընտանիքի տարվա միջոցառումներին տալ միայն «հավուր դատշաճի» կերդարանք: Այդ կարծիքի մեջ ավելի ես համոզվում, երբ ծանոթանալով հանձնաժողովի կազմին, ընտանիքի խնդիրներով զբաղվող եւ ոչ մի գիտնականի կամ մասնագետի անուն չես գտնում:

Մնում է միայն ենթադրել, որ վարչապետ Խոսրով Հարությունյանին լիարժեք չի զեկուցվել, թե ՄԱԿ-ը 1994 թ. ընտանիքի տարի հայտարարելով, իրականում ինչ նդատակներ է հետամնդել:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Էմբիոն

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳԻՆԸ

Մեր ապագան այսօրվա ընտրությունից է մեծապես կախված

Այսօր շատ է խոսվում խաղաղության մասին, դեռ «չճաշակած» իսկական պատերազմը: Հենց սա է, որ խեղաթյուրում է խաղաղության բուն էությունը, եւ լայն զանգվածներն իրական պատկերացում չունեն կյանքի այդ երկու վիճակների մասին: Ի՞նչ են պատերազմն ու խաղաղությունը՝ գոյության անբնական վիճա՞կ, թե բնական ընթացք, մարդկության առաջընթացի պայման: Ահա ձեզ երկընտրանք՝ լուծեք ինչպես կամենաք, ընտրեք ձեր սրտամոտ ճանապարհը: Սակայն... իրականում ընտրությունը ոչ ոք չի կատարում եւ չի կարող կատարել համընդհանուր ծավալով՝ ընտրությունը պարտադրվում է արդեն իսկ համընդհանուր ընթացքի մեջ: Այսինքն, տեղի է ունենում գոյաբանական հերթական շրջափուլն անկախ ամեն ինչից, եւ հարկ է լինում ընտրել այդ ճանապարհներից որեւէ մեկը: Սակայն կրկին անկախ այդ ընտրությունից շրջափուլը հանգելու է իր վախճանին, եւ «կիսվելու» են արդյունքները: Այսպիսով, ի՞նչ է սպասվում մեզ ճամփաբաժանից այն կողմ:

Այսօր ստեղծվել է նույնանման իրավիճակ: Ըստ երեւույթին երկաթյա տրամաբանություն պետք չէ հասկանալու համար, որ պարտադրված է պատերազմ մեզ եւ Ադրբեջանին, եւ այս չորս տարվա փորձը ցույց է տալիս, որ որեւէ մեկի հաղթությունն անմիջապես պատժվում է՝ պատճառելով գրեթե անդառնալի կորուստներ: Մոռանանք անցյալում ամեն ինչ՝ այսօր մենք եւ հակառակ կողմը փաստորեն կանգնած ենք այս իրավիճակի առաջ: Ով փորձում է խույս տալ պարտադրված պատերազմից, պատժվում է ավելի հաճախ երրորդ եւ աներեւույթ թվացող ուժի կողմից: Սա տարբերակներից մեկն է՝ անգիջում լինել, եթե ուզում ենք պահել հայրենի տարածքները, դրա համար կենտրոնացնելով ներքին բոլոր պաշարները եւ հնարավորությունները: Մյուս տարբերակի ընտրության դեպքում հնարավոր են այսպիսի հետեւանքներ՝ կորցնում ենք (տալիս ենք) տարածքներ եւ խաղաղություն է հաստատվում: Այդպե՞ս է արդյոք:

Խաղաղության նման տարբերակի կողմնակիցների ուշադրությունը հրավիրենք նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ներկա իրավիճակի վրա: Ո՞ր հանրապետությունն է այսօր զերծ մնացել զանազան կարգի դժվարություններից եւ ազգամիջյան բախումներից: Նույնիսկ Ղազախստանը, Ղրղզստանը, Բելառուսը, որոնք այսօր թվում են խաղաղ, ունեն մեռանման բազմաթիվ խնդիրներ եւ չի բացառվում, որ կներքաշվեն ավելի ծանր ու արյունալի բախումների մեջ. դա անխուսափելի ընթացք է: Երկրորդ, ո՞վ է երաշխավորել, որ եթե չլիներ պատերազմը, չլիներ Ղարաբաղը (իր խնդրով հանդերձ), արդյոք բաց կլինեին բոլոր ճանապարհները, գազատարը և այլն, որոնք անցնում են Չեչնիայով, Աբխազիայով, Օսիայով, Վրաստանով եւ վերջապես Հայաստանով, որտեղ պակաս չեն բալանվում ժողովրդական բեռները: Կամ ո՞վ կարող է հիմնավոր ապացուցել, որ եթե չլիներ Ղարաբաղը, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ աշխարհի տերերը պատերազմ չէին բորբոքի: Կբորբոքեին, եւ այդ ժամանակ մենք առավել ծանր վիճակում կհայտնվեինք, քանզի հարվածի ողջ ծանրությունը երկու կողմից կընկներ բարալիկ Զանգեզուրի վրա (Ղարաբաղն այսօր տվողները թող հաշվի առնեն սա): Սա տարբերակներից մեկն է: Պատերազմի բորբոքման այլ շարժառիթներ էլ կգտնվեին:

Նախկին Խ. Միության շրջաններից անկախանալու եւ ինքնուրույն գոյատեւելու ամենախրական հնարավորությունները թերեւս Այրկովկասն ուներ (եթե բացառենք արտաքին բիրտ միջամտությունը). հիանալի վարելահողեր ու անասնապահական շրջաններ, էներգետիկ զգալի պաշարներ, եւ դեռի Համաշխարհային օվկիանոս, հզոր արտադրական ներուժ եւ բարձրակարգ գիտական կադրեր: Բնական է, որ հարվածի առավել ծանր բաժինը հասնելու էր Այրկովկասին, մանավանդ որ այս ամենի հետ մեկտեղ առկա էին նաեւ էթնիկական հին ու կատաղի հակասություններ, եւ հենց դա էլ օգտագործվեց: Այս դեպքում էական չէ Այրկովկասը բնակեցնող ժողովուրդների քաղաքակրթվածության աստիճանը. ժողովուրդներն ու նրանց կախյալ ղեկավարությունները հետեւությամբ են կուլ գնում դավադրությանը, ցանկացած ժողովուրդ: Ահա եւ ընտրվեց խուլ ատելության հետեւանքով կծիկը Այրկովկասը, եւ մենք այսօր սահմանների վերանայման համաշխարհային ընթացքի մեջ ենք սա է փաստը: Ցանկացած վերլուծություն, տեսակետ, գաղափար, եթե հաշվի չի առնում այս փաստը՝ անիմաստ է: Մատ Չեդունը ժամանակին երկաթյա տրամաբանությամբ մարդկության համար հայտնագործեց, որ կամուրջը միացնում է գետի հակադիր ափերը, այսօր նման տրամաբանությամբ հարկավոր է արձանագրել, որ պատմական անցյալն ու ժառանգությունը մի կողմ, եթե հեզ վրա կրակում են, դու էլ ես պարտավոր կրակել:

Մեր կարծիքով, եթե չլիներ այս պատերազմը, վիճակն ավելի ծանր կլիներ Հայաստանում: Մեկնաբանություններ չանելով, բանզի դրանց մեջ անդայման «պետական գաղտնիքներ» կերեւակվեն (բայց պետություն ենք՝ գաղտնիքի ի բույլատրելի հասակ սահմանազատում չկա, անգամ բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներում), նշենք միայն, որ մենք խաղաղության կողմնակից ենք առավել, քան՝ խաղաղություն մուրողները. բանզի մեր կաշվի վրա ենք անմիջականորեն զգացել պատերազմի էությունը: Խաղաղությունը պետք է նվաճել՝ ահա եւս մեկ համընդհանուր ճշմարտություն:

Առաջին տարբերակը. այսինքն անգիջում դիրքորոշումը նպատակին կհասցնի ներքին բոլոր պաշարները կենտրոնացնելու դեպքում, ինչն այսօր չի արվում: Այդպես էլ երեւի պետք է լիներ, բանզի իշխանությունների սոցիալական հիմքը կազմում են հասարակ շարչիներն ու սեղանատերը, բենզինի տերերն ու տեղական «նալոգ» հավաքողները: Սրանք, փող աշխատելու մոլուցքով բռնված, պատերազմի ու շրջափակման բացակայությամբ էլ կանեին իրենց գործը, եւ չարժե նրանց համարել պատերազմի հետեւանք՝ սրանք ժամանակի ծնունդն են, «նախնական կապիտալի կուտակողներ», ինչպես բնորոշեց պետական մի բարձրաստիճան պաշտոնյա: Նրանք տեր ու տնօրինություն են անում նախկին Խ. Միության գրեթե բոլոր հանրապետություններում:

Մի բան ակնհայտ է, որ նման «սոցիալական հիմքով» եւ գիշողականությամբ ոչ խաղաղության է հնարավոր հասնել, ոչ էլ ազգային պետականություն կառուցել: Անհրաժեշտ է հիմնովին վերանայել բոլոր տեսակետները ու մոտեցումները՝ մերժելով անհող խաղաղությունն ու չգիտակցված պատերազմը: Երկրորդ, պետք է վերջ տվի անպատժելիությանը, հատկապես պաշտոնության եւ ամոռան պարտությունների մեղավորների հանդեպ՝ ընդհուպ մինչեւ գնդակահարություն, այլապես հայրենիքն արդեն մանրադրամ է դառնում ամեն մի փողոցային բախտախնդրի համար:

Ժամանակն ու հայրենիքի շահը պարտադրում են (թեկուզ եւ անկախ մեր կամքից) անգիջում լինել եւ գնալ մինչեւ վերջ, եթե կամենում ենք կարգին պետություն դառնալ: Ներկա Հայաստանը չի կարող լիարժեք հայրենիք լինել՝ սա են վկայում այսօրվա իրողությունները: Անհրաժեշտ է ժողովրդին ներարկել նոր արժեքներ եւ սկզբունքներ, որոնք զերծ կլինեն անցյալի ժառանգությունից եւ կսովորեցնեն մարդկանց լիարժեք գոյատեւել: Օրինակ կարող է լինել Ղարաբաղի հայությունը, որը չնայած այս բոլոր տարիների խարդավանքներին, շարունակում է աղրել ու արարել շնորհիվ ներքին կազմակերպվածության ու տոկունության: Եթե ԼՂՀ-ն քայքայելու գործին ակամա չլծվեր Հայաստանի Հանրապետությունը (ամառվա պարտությունները), այսօր գոյություն կունենար երկրորդ հայկական պետությունը, որպես Այրկովկասում ուժեղ ու ինքնուրույն ռազմաքաղաքական միավոր, որն էլ իր հերթին Հայաստանի առաջընթացի երաշխիքը կդառնար: Սակայն այսօր էլ, չնայած ամառվա ծանր պարտություններին ու խոշոր կորուստներին, ԼՂՀ-ն ասիճանաբար շտկում է մեջքը, կրկնում ենք, շնորհիվ ժողովրդի ներքին կազմակերպվածության ու նպատակասլացվածության, ինչը հատուկ չէ Հայաստանի ու մանավանդ Երեւանի բնակչությանը: Սակայն ամեն ինչ հաղթահարելի է, եւ ժողովրդին, որպես անձեւ նյութի, հետ է ցանկացած ձեւ տալ ազգամեջ նպատակների համար:

Ըստ երեւույթին, սա է այսօրվա երկընտրանքը: Պատմության մեջ մենք միշտ ընտրել ենք անհող խաղաղության եւ չգիտակցված պատերազմի ճանապարհը, եւ արդյունքներն առկա են: Այսօր ո՞ր ճանապարհն ենք ընտրում: Մեր հին գրույցներում ժողովուրդն իր լավագույն հերոսին ուղարկում է մութ ու դժվարին ճանապարհով, եւ նա հաղթանակած հետ է վերադառնում: Թե՞ մենք այդ գրույցներն արարող ժողովուրդը չենք: Իսկ մի այլ գրույցում ասվում է, թե հողը դժվար է ընդունում իրեն մի անգամ լքելուց հետո՝ նա շատ արյուն է կլանում հատուցման համար:

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԱՆ

Մեկնաբանի Անկյուն

Կարդանք, կտեսնենք...

Ավարտվեց Դաշնակցային Ռուսաստանի ժողովրդագրավորների համագումարը: Հայաստանի համար այն հետաքրքրական էր այնքանով, որ համագումարի արդյունքները կարող էին ինչ-որ չափով ազդել ուժերի հարաբերակցության վրա հանրապետությունում: Գաղտնիք չէ, որ մեզանում գոյություն ունեն իրար հակադիր երկու տեսանկյուններ, որոնք խարսխվում են արեւմտյան-արեւելյան եւ հյուսիս-հարավ քաղաքագիտական մշակումների վրա: Համագումարից երկու կողմն էլ որոշակի սպասելիքներ ուներ: Արդարացվեցի՞ն արդյոք այդ սպասելիքները:

Միանշանակ պատասխանի մեկնաբանը ոչ ոք չունի: Փաստորեն թե առաջինները, թե երկրորդները գնահատում են համագումարի արդյունքները յուրովի.

Մենք կանխագուշակում էինք, որ Գայդարը չի անցնի. Ելցինը պարտություն կկրի եւ ամեն ինչ կվերադառնա հին, ոնդում են աջերը...

Չերնոմիրդինը բարեփոխումների կողմնակից է եւ գիտակ մարդ, հակաճառում են ձախերը: Ելցինը, ձեւը զոհաբերելով, պահպանեց բովանդակությունը:

Ո՞վ է վերջիվերջո ճիշտ: Ամենից էլ ցանկություն չունենալով վերածել այս ամենը կատակի, այնուհանդերձ ասենք, որ ճշմարտությունը, ինչպես միշտ, մեջտեղում է: Եւ ճշմարտությունն այն է, որ սա թե Ելցինի եւ թե ընդդիմության ասիճանական փոխզիջումների ձեւով դրսեւորված երկկողմ պարտությունն էր: Ընդդիմությանը չհաջողվեց Գայդարի փոխարեն անցկացնել Ռուցկոյին կամ Խիժային եւ պատնեշ դնել բարեփոխումների ճանապարհին, իսկ Ելցինը, կորցնելով Գայդարին, կորցրեց եւ բարեփոխումների տեմպը: Բայց ակնկալվում է, որ Չերնոմիրդինի օրոք բարեփոխումների ուղղվածությունը կմնա նույնը: Ճիշտ է, որոշակի շեղումներ տեղի կունենան, պայմանավորված Ելցին-Խասբուլատով հանդիպման արդյունքներով:

Ընդհանուր առմամբ, նախագահ Ելցինը հետեւողականորեն կշարունակի «պատուհան» բացել դեպի Եվրոպա, եւ Ռուսաստանն ի դեմս նրա ակնկալում է նոր Պետրոս 1-ին ձեռք բերել: Սա այնքան կարեւոր փաստ է Հայաստանի համար, որ այն դժվար է գերագնահատել, եթե դիտարկենք այդ փաստը որոշակի պատմական զուգահեռների ենթատեքստում:

Դեռ իր ժամանակին արեւմտյան, եւ ոչ միայն արեւմտյան, քաղաքագետներն առաջ քաշեցին Արեւմուտքի եւ Արեւելքի հակամարտության մասին դրույթը: Այդ հիմնադրույթն իր վերջնական ձեւակերպումը ստացավ Ուինստոն Չերչիլի Ֆուլտոնում արտասանած հայտնի ճառում: Ամենաբարձր ատյանների կողմից ընդունվեց, որ հիտլերյան Գերմանիայի ջախջախումից հետո ԽՍՀՄ-ը դառնում է թիվ մեկ թշնամին, եւ բոլոր հնարավորությունները, թե տնտեսական, թե մտավոր, պետք է օգտագործվեն այն քայքայելու նպատակով: Պատերազմի ավարտից 45 տարի անց կայարությունն իրոք քայքայվեց:

Հարց է առաջանում. գործո՞ւմ է արդյոք Արեւմուտք-Արեւելք հակամարտությունն այսօր՝ Արեւմուտքի այդ «փաստացի հաջողությունից» հետո: «Այո, ասում են ոմանք Հայաստանում: Քանի որ ԽՍՀՄ փլուզումը գործի կեսն էր»: Ռուսաստանը բոլոր հատկանիշներով նույնպես կայարություն է, եւ Արեւմուտքը պետք է գործը հասցնի տրամաբանական վախճանին: Իր ողջ պատմության ընթացքում լինելով ամբողջատիրական երկիր, Ռուսաստանը չունի ոչ մի քաղաքական երաշխիք, որ ամբողջատիրական համակարգը չի վերածնվի մի այնպիսի պայմաններում, երբ վտանգի տակ է պետության ամբողջականությունը, իսկ ժողովուրդը կարգ ու կանոն եւ «ուժեղ ձեռք» է պահանջում: Արեւմուտքի տեսանկյունից դա անբույլատրելի է: Սա է պատճառը, որ Թուրքիայի, որպես Արեւմուտքի դաշնակցի դերը շրջանում մնում է արդիական: Ռուսները լավ են հասկանում, թե ինչ է ցանկանում Արեւմուտքը: Բնականաբար, ռուսները դա չեն ցանկանում: Հետեւաբար, կանխատեսելի է Ռուսաստան-Արեւմուտք աղազա բախումը: Գուցե ոչ անմիջական, այլ Թուրքիա-Իրան միջնորդավորված ձեւով: Իսկ քանի որ Հայաստանը շատ ավելի մոտ է Ռուսաստանին տնտեսական, սոցիալական եւ հոգեբանական առումով, եւ հաշվի առնելով, որ Արեւմուտքի շահերը շրջանում ներկայացնում է Թուրքիան, Հայաստանի անելիքները պարզ են...

Սա առաջին տեսանկյունն է, եւ այն հիմնվում է Արեւելք-Արեւմուտք հակամարտության հիմնադրույթի վրա: Բայց վերջին ժամանակներս հատկապես ԱՊՀ կազմավորման ժամանակաշրջանում մեծ տարածում է ստացել երկրորդ հյուսիս-հարավ հակամարտության հիմնադրույթը: Այս հիմնադրույթի շրջանակներում խնդրի հարցադրումները եւ շեշտադրումները փոխվում են, այն էլ էականորեն: Տեսանկյունը պաշտոնյաները պնդում են, որ Արեւմուտքը հասել է իր նպատակին եւ ԽՍՀՄ-ը պատմության գիրկն է անցել: Սա առաջընթաց քայլ էր, քանի որ նույնիսկ Արեւելքի քարոյականության տեսակետից «չարի կայարությունը» կառուցվել էր միլիոնների արյան ու ոսկորների վրա: Եւ այսօր արդեն Արեւմուտքը ոչինչ չունի կիսելու Ռուսաստանի հետ, առավել եւս, որ Ռուսաստանն ընտրել է բարեփոխումների եւ ժողովրդավարության ուղին: Ավելին, Արեւմուտքը եւ Ռուսաստանը մտել են դաշնակցային հարաբերությունների մեջ, քանզի Թուրքիան Արեւմուտքի նախկին դաշնակիցը, կայսերական ախորժակ է ցուցաբերում, փորձելով իր ազդեցությունը տարածել ԽՍՀՄ նախկին տարածքի, մասնավորապես, միջինասիական հանրապետությունների ու Ադրբեջանի վրա: Արեւմուտքին բուրքական քաղաքական գործիչները մի անգամ չէ, որ հայտարարել են, թե 21-դը բուրքական դար է լինելու: Արեւմուտքին անհանգստացնում է նաեւ արմատականների դիրքերի ուժեղացումը շրջանում: Արեւմուտք-Ռուսաստան նոր դաշինքը նպատակ ունի դիմագրավելու նշված միտումներին: Այս առումով Հայաստանը կարիք չունի ընկնելու ծայրահեղությունների մեջ. դաշնակցելով Ռուսաստանի հետ, նա ամենեւին էլ չի հակադրվում Արեւմուտքին, իսկ դաշնակցելով Արեւմուտքի հետ՝ հարաբերությունները չի փչացնում Ռուսաստանի հետ:

Ռուսական համագումարը նրանով էր կարեւորվում, որ պետք է պատասխան տար այս հարցադրումներին: Եթե այն մերժեր բարեփոխումների ուղին եւ իշխանության գային մեծապետական, պահպանողական ուժերը, ապա Ռուսաստան-Արեւմուտք բախումը վերը նշված առաջին սցենարով կդառնար անխուսափելի: Հիշեցնենք, որ պատգամավոր Բաբուրինը հեռուստաելույթի ժամանակ չբաքցրեց աջերի համակրանքն Իրանի «ամերիկյան իմպերիալիզմի բշնամու» հանդեպ:

Ինչեւէ, կարծում ենք համագումարում հաղթանակ տարավ բանականությունը: Ընդհանուր ուղղվածությունը մնաց նույնը, եւ Ռուսաստանը չշեղվեց հասարակության ժողովրդավարացման եւ տնտեսության ազատական բարեփոխումների ճանապարհից: Ի դեպ, Գայդարի գրեթե ողջ աշխատակազմն ընդունեց Չերնոմիրդինի առաջարկած համագործակցության հրավերը:

Դե ի՞նչ: Մնում է միայն ենթադրել, որ Արեւմուտք-Արեւելք հիմնադրույթի բովանդակությունը կորցնում է իր արդիականությունը... Ինչպես ասում են, ժամանակն ամենալավ դատավորն է: Կարդանք, կտեսնենք...

ԱՐՍԱ ՅԱՎՐՈՒՅԱՆ

«ՀԱ» հեռագրական ծառայություն

digitised by A.R.A.R.@

Շրջան

ՕՍ-ԻՆԳՈՒՇԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային Կովկասն աշխարհագրականորեն ընդգրկում է Կասպից ծովից Սեւ ծով ընկած տարածը: Այստեղ շատ ժողովուրդներ են աղորում մոտ 50: ԽՍՀՄ-ում այս տարածը բաժանված էր 8 ինքնավար հանրապետությունների ու մարզերի. Դաղստանի, Հյուսիս-օսական, Չեչենական, Ինգուշական, Բալկարական, Աբխազական ԻՍՍՀ-ները, Կարաչայ-չերքեզական ու Ադղեական ԻՄ-երը: Հյուսիսկովկասյան ժողովուրդների գաղթերի ողբերգությունը եւ նրանց այսօրվա բնակեցումը կարող են ողբասխան տալ այսօր ծագած մի շարք հարցերի, երբ քաղաքական իրադրությունը այս շրջանում խիստ տվել է, որն իր հերթին ազդում է Անդրկովկասի իրադրության վրա: Հիշենք Հայաստանի գազամուղի փակման միջադեպը, որի հետեւանքով Ռուսաստանը հարկադրված եղավ փոխհատուցել վնասները: Հյուսիսկովկասյան երեք «բեժ կետերից» կանգ առնենք հսկայական զոհերի ու ավերածությունների ողբերգություն դարձած օս-ինգուշական հակամարտության վրա:

Օս-ինգուշական հակամարտությունն սկսեց հասունանալ ոչ թե Դաշնակցային Ռուսաստանի կազմում Ինգուշական Ինքնավար Հանրապետության կազմավորումից, ինչպես շատ եզրակացության հանգեցին շատ վերլուծողներ, այլ Չեչենական Հանրապետության անկախ հայտարարվելուց հետո: Նշված ժամանակի եւ Ինգուշական Հանրապետության կազմավորման որոշման միջեւ ընկած հատվածում էլ այդ հարցն օդում կախված էր: Եւ եթե Ռուսաստանի իշխանությունները «մի կողմ քաշված» սպասում էին, թե ինչ կլինի, Չեչնիայի նախագահ Ջ. Դուդաեւը ինգուշներին հանգստացնում էր իր բարի կամքով, խոսանալով նրանց իրենց կամքով ընդգրկվել Չեչենական Հանրապետության կազմի մեջ (միարկեն, տարածքով հանդերձ): Ինգուշների համար այդ անհասկանալի ժամանակն օգտագործեց նաեւ Ռուսաստանը, որտեղ ամբողջ բավով դատապարտում էին Ինգուշական Հանրապետության կազմավորման վերաբերյալ որոշումը: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ եթե ինգուշները դախկին Չեչենա-Ինգուշական ԻՍՍՀ-ի կազմում ունեին գոնե ինչ-որ տարածք, ապա Չեչենական Հանրապետության ի հայտ գալուց հետո լիովին մնացին առանց վարչականորեն հաստատված տարածքի, այսինքն այդուհետեւ խոսքը գնում էր արդեն այն տարածքների մասին, որտեղ ապրել եւ ապրում են ինգուշները, իսկ նրանք ապրել են եւ Հյուսիսային Օսիայում, եւ Դաղստանում, եւ հենց Չեչենական Հանրապետությունում: Սալիգյան ազգային փառաբանված քաղաքականությունն այստեղ եւս բացեց հարցերի ողջ համալիրը: Այսպիսով, ինգուշական այժմյան խնդիրն առաջին հերթին տարածքային է: Չեչենական Հանրապետության ղեկավարությանը հաջողվեց ինգուշներին համոզել նաեւ այն բանում, որ նրանք կարող են տարածք ստանալ ամենուին էլ ոչ Չեչնիայից, որի կազմում նրանք ապրում էին: Այսպես էլ ինգուշների ուշադրությունը սեւեռվեց սահմանակից հանրապետության՝ Հյուսիսային Օսիայի վրա: Անմիջապես էլ հայտնվեցին Հյուսիսային Օսիայի Պրիգորոդնի կոնֆլիկտային շրջանից (մայրաքաղաք Վլադիկավկազի մոտ) Սալիգի կողմից ինգուշների վերաբնակեցման ոչ վաղեմի դատմության փաստերը: Որպես դատապարտյալ ուզում եմ անմիջապես ասել, որ որոշ կեղծ հայրենասերների այդ տարածքների ինգուշական դատկանելության վերաբերյալ փաստեր գտնելու փորձերն աղաղակուն անցան, քանի որ դրանք գոյություն չունեին: Դրանք դատմականորեն օսերի տարածքներն են: Տեղին է հիշել եւ այն բանը, որ Հյուսիսային Կովկասում Հյուսիսային Օսիան ստրատեգիական կարեւոր դիրք ունի:

Գտնվելով Հյուսիսային Կովկասի կենտրոնում, Հյուսիսային Օսիան Ռուսաստանին հնարավորություն է ընձեռնում ունեցած հաղորդակցության միջոցներով հսկել իր շահերը նաեւ Անդրկովկասում: Բոլորին էլ հայտնի է, որ ռազմավիրական ճանապարհն սկսվում է Վլադիկավկազում եւ վերջանում Թբիլիսիում: Մյուս ճանապարհն անցնում է Մամիսոնյան լեռնանցքով (Հարավային Օսիա). դա հարավ-օսական ռազմական ճանապարհն է: Դրանք այն զարկերակներն են, որ հազարամյակների ընթացքում կապ են ապահովել Հյուսիսային Կովկասի եւ Անդրկովկասի միջեւ: Այժմ կան նաեւ կարեւոր նոր երեւույթներ. Ռուսաստանից Վրաստանով Հայաստանին գազ մատակարարող գազամուղը: Գոյություն ունի մի այլ երթուղի չավարտված ճյուղ, որի մասին շատ քիչ գիտեն՝ երկար տարիներ շարունակ կառուցվող բունելը: Այն անցնում է Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով Ջավի կիրճի շրջանում (Հարավային Օսիա) եւ ելքը ենթադրվում էր Հյուսիսային Օսիայում: Մասնագետների (շինարարների) տեսության համաձայն այս երկաթուղին Երեւան-Մոսկվա ճանապարհը կրճատելու էր 12 ժամով եւ բեռնաթափելու էր մյուս՝ Աբխազիայով անցնող երկաթուղին: Այս երկաթուղու շինարարությունն ընդհատվեց դեռեւս 1987 թվականին՝ «բնադահոյան» նկատառումներով: Թեեւ դժվար չէ եզրահանգել, որ դա նման տնտեսական խոշոր խնդրի զուտ քաղաքական լուծում էր: Ընդ որում ճանապարհի շինարարության դադարեցման նախաձեռնողը Վրաստանն էր, որը չէր ցանկանում ուժեղացնել ու ամրապնդել Հյուսիսային եւ Հարավային Օսիաների միջեւ կապերը:

Ռուսական իշխանությունների հատուկ գործողությունները Հյուսիսային Կովկասում, մասնավորապես ծագած հակամարտության կապակցությամբ Հյուսիսային Օսիայի եւ Ինգուշիայի տարածքներում արտակարգ դրության սահմանումը բացատրվում է նաեւ իրավաբանական գործոններով: Դաշնակցային Ռուսաստանը դրանով իսկ դատանում է դաշնության սուբյեկտներից մեկին՝ համագործակցության դայմանագիրն ստորագրած Հյուսիսային Օսիային, իսկ այնտեղ հստակորեն գրված է, որ ֆեդերալ կառավարությունը դատարավոր է անհրաժեշտության դեպքում ֆեդերացիայի սուբյեկտի համաձայնությամբ սահմանել արտակարգ դրություն: Ռուսաստանի օսերի հանդեպ ունեցած նկատառումների վերաբերյալ ռուսական հեռուստատեսությամբ հաղորդումները նույնպես դատահական չեն ցույց տալու համար, որ Ռուսաստանը կդաշտդանի իր հենց այն մասի շահերը, որն ստորագրել է դայմանագիրը: Օս-ինգուշական հակամարտության գոտու իրադարձություններն ու Ռուսաստանի կառավարության գործողությունները վկայում են այն մասին, որ Ռուսաստանը խոսքից գործի է անցել եւ հսկողության տակ է առել իր շահերի դաշտդանությունը ոչ միայն Հյուսիսային Կովկասում, այլեւ կկարգավորի անդրկովկասյան իր խնդիրների կատարումը: Պակաս կարեւոր չէ եւ այն, որ օսերը հանդիսանում են Հյուսիսային Կովկասի նշանակալից էթնիկական խմբերից մեկը (600 հազար): Օսերը քրիստոնյա ժողովուրդ են (907 թվականին ընդունել են ուղղափառ դավանության քրիստոնեությունը): Հսկողության տակ վերցնելով իրադրությունը Հյուսիսային Օսիայում եւ Ինգուշիայում, դրանով իսկ Ռուսաստանը Հյուսիսային Կովկասը բաժանում է երկու մասի, որտեղ արդեն դիտվում են կրոնական հիմքի վրա հյուսիսկովկասյան ժողովուրդների միավորման միտումները:

Հյուսիսային Կովկասի ոչ այնքան վաղ անցյալի դատմության մեջ արդեն կան նման բնույթի փաստեր: Հիշենք թեկուզ Շամիլի շարժումը: Եթե դիտարկենք Ռուսաստանի գործողությունները դատմական առումով, ապա կարելի է ասել, որ հյուսիսկովկասյան ժողովուրդները երկար տարիներ դայքարել են ընդդեմ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու, եւ ազգային հալածանքի քաղաքականությունը, որ իրագործում էր ցարական ինքնակալությունը, այդ շրջանում կազակների բնակեցումը սկսած 16-րդ դարից հյուսիսկովկասյան ժողովուրդներին միավորելու հնարավորություն չեն տվել: Եւ որդեսզի կրոնական գործոնը չդրսեւորվի, Ռուսաստանը 17-րդ դարից այստեղ տարածել է քրիստոնեությունը, դրանով իսկ դյուրին դարձնելով Հյուսիսային Կովկասի միացումը Ռուսաստանին: Շամիլի շարժումն ըստ էության այս ժողովուրդներին համախմբեց իսլամական դրոշի ներքո: Այն ժամանակ Ռուսաստանը ձեռք առավ արտակարգ միջոցներ եւ արյունահեղ դատերազմի արդյունքում ճնշեց Շամիլի շարժումը.

Արդի դատմության հարցերը քննարկելուն անցնելիս մենք գործ ունենք նմանօրինակ շատ հետաքրքիր երեւույթի՝ լեռնային ժողովուրդների Համաձայնության հետ: Մեր հարցի կապակցությամբ ուզում եմ ասել, որ դա շատ խայտաբղետ միավորում է, եւ այստեղ միակը, որ համախմբում է, դա շարածքն է, քանի որ ինքը Համաձայնությունը իրավաբանական հասկացություն է եւ ենթադրում է միավորում՝ անկախ հանրապետությունների տարբերի միավորումից: Համաձայնության ստեղծման ընթացքում գործում դեր խաղաց Չեչենական Հանրապետությունը, այդդիսով ծրագրելով շաղացնել Հյուսիսային Կովկասի անկախ հանրապետությունների քանակը եւ դրանց մեջ գրավել առաջնորդող դիրք: Ադրբեջանցի էմիսարները նույնպես ծավալում են իրենց գործունեությունը: Այսպես, ադրբեջանական Վերածնունդ ժողովրդական կուսակցության (մուսաֆաք) առաջին քարտուղար Ալիմադես Կասումզադեն «Թուրքիզմ. առասպելներ եւ իրականություն» հոդվածում («Кавказский дом», աղրիլ, 1992 թ.) իր կուսակցության քաղաքականության հիման վրա դատմական առումով ցույց է տալիս թուրքիզմի զարգացումը անցյալ տարիների օրինակով եւ այդ հիման վրա դայքարում է իսլամական ժողովուրդների Համաձայնություն ստեղծելու համար: Ինչպես տեսնում եք, Համաձայնությունն ասիճանաբար սփռվում է գաղափարական կարգի որոշ իրադարձություններով. սակայն մտածել, որ կրոնական գործոնն այստեղ գլխավորն է, միամտություն կլիներ. ակնհայտ է, որ դա Ադրբեջանի դանթուրքական նկրտումների բաղադրիչն է: Սակայն իրադարձությունների նման զարգացման համար հող վաղուց էր դատրաստված: Այսպես, Հյուսիսային Կովկասի շատ ժողովուրդների ուղեղները մշակել էին, որ նրանք մահմեդականությունը վաղուց են ընդունել: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել, որ Հյուսիսային Կովկասում դատմական գրականության մեջ վերջին 20 տարվա ընթացքում այդ մասին շատ է գրվել: Կարգին աշխատանքների կողքին հրատարակվել են նաեւ դատմական փաստերի զեղծարարություններ: Այսպես օրինակ, եթե մինչեւ 1970-ական թթ. գոյություն ուներ հաստատված կարծիք այն մասին, որ աբխազները քրիստոնություն են ընդունել 338-ին, ապա վերջին տարիներին դատմության մեջ խցկեցին այն կարծիքը, թե աբխազները մահմեդական են, եւ Աբխազիայում իսլամի դրոշի ներքո այժմեական գործողությունները դատահական չեն, քանի որ դատմագիտությունը հանդիսանում է ազգային ինքնագիտակցության հիմնական բաղադրամասերից մեկը: Անգամ մեզ մոտ, Հայաստանում շատերն են կասկածում աբխազների քրիստոնյա լինելուն:

Սակայն վերադառնանք մեր խնդրին. Համաձայնությունում դրությունը փոխվեց Ռուսաստանի ներսում համագործակցության դայմանագրի ստորագրումից հետո: Այնտեղ հայտնվեցին ըստ էության ղեկավարական տարբեր կարգավիճակ ունեցող ժողովուրդներ: Ըստ էության Համաձայնության դերը հանգեցնում էր տեղական հումանիտար բնույթի խնդիրների լուծմանը, որը նույնպես քիչ կարեւոր չէ: Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ աբխազա-վրացական հակամարտության հարցում Համաձայնության շատ ժողովուրդներ չեզոքություն հայտարարեցին:

Որոշակի լարվածություն է առաջացնում ԱՊՀ երկրների հետ սահմանները ճշտելու Ռուսաստանի ձգտումը: Կանգ առնենք հյուսիսկովկասյան ժողովուրդներին վերաբերող հարցերի վրա: Եթե Ռուսաստանը ընդունի Չեչնիայի անկախությունը, Չեչենական Հանրապետության հետ սահմանների ճշտումը տանում է Ռուսաստանի կողմից Չեչնիայի հանդեպ տարածքային դահանջներ առաջ քաշելուն, ի նկատի ունենալով ինգուշների բնակության տարածքները: Հաջորդ դինդ հանգույցը Ռուսաստանին հարկ կլինի լուծել Վրաստանի հետ սահմանները ճշտելիս: Այդ դեդքում բարիկադների երկու կողմում կհայտնվեն օսերը (Հյուսիսային եւ Հարավային Օսիաները): Հարավային Օսիայի ղեկավարության վերջերս արած հայտարարությունը Վրաստանի կազմից դուրս գալու եւ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու վերաբերյալ այդ է վկայում: Ռուսաստանի սահմանն Ադրբեջանի հետ երկու մասի կբաժանի լեզգիներին: Դաղստանի դեդքերի մասին շատ է գրվել. դա առանձին քննարկման ենթակա խնդիր է:

Այսդիսով, օս-ինգուշական հակամարտության գծի վրա դեդքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հյուսիսային Կովկասը հանդիսանում է Ռուսաստանի ազգային շահերի կարեւոր գոտիներից մեկը, եւ նա դրանք դետք է դահի ցանկացած միջոցով: Մեր հանրապետությունը նույնդես անմիջականորեն կախված է այս իրադարձությունների ելքից: Մեր հանրապետության մամուլում բառացիորեն հաղորդում ենք, որ Հայաստանն ուզում է իր ներկայացուցչությունը բացել Աբխազիայում: Իհարկե, դա շատ կարեւոր է: Բայց մեզ թվում է, որ նման ներկայացուցչություն անհրաժեշտ է բացել Վլադիկավկազում, որտեղ Հյուսիսային ողջ Կովկասն ընդգրկելու համար եւ նշանակել իրազեկ մարդու, որը լավ գիտի տեղի դայմանները:

ՈՌՈՉ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳԱ դատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Դարձ

Եվ. Շատրնիկով. Միջուկային ուժերի անվտանգության խախտման միտում

Բելառուսում, Ուկրաինայում եւ Ղազախստանում մարտավարական միջուկային զենքի ստուգումները «բացահայտել են միջուկային անվտանգության խախտման միտում»: Այդ մասին երկուշաբթի օրը «ԻՏԱ»-ին հայտարարել է ԱՊՀ միացյալ զինված ուժերի հրամանատար մարշալ Եվգենի Շատրնիկովը:

Շատրնիկովի խոսքերով, միջուկային անվտանգության խախտումները դահեստամասերով ապահովման մեխանիզմի բացակայության արդյունք են: Այդ հիմնախնդիրը կքննարկվի դեկտեմբերի 25-ին Մինսկում ԱՊՀ չորս դետությունների դատշտանության նախարարների հանդիդման ժամանակ: Մարշալը հույս հայտնեց, որ այս հանդիդման ժամանակ ի վերջո համաձայնություն կկայացվի Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ միջուկային ուժերի կապակցությամբ:

Միեւնույն ժամանակ մարշալը նշել է, որ կոլեկտիվ անվտանգության դայմանագիրը, ինչպես նաեւ խաղաղադահի ուժերի ստեղծման համաձայնությունը դեռեւս իրականություն չի դառնում: Չնայած Թերմեզում որոշվել էր Տաջիկստան ուղարկել միացյալ խաղաղադահի ուժեր, առայժմ դրան դատրաստ է միայն Ուզբեկստանը. Ղրղզստանի խորհրդարանը դեմ հանդես եկավ, Ռուսաստանի եւ Ղազախստանի խորհրդարանների դիրքորոշումը դեռ դարզ չէ: Շատրնիկովի կարծիքով, Մինսկի հանդիդումը դետք է տա նաեւ այդ հարցի դատասխանը:

ՄԱԿ-ի դատժամիջոցներին միանալով Ռուսաստանը չի տուժում

Ռուսաստանի ԳԽ-ում երկուշաբթի օրը գնահատականներ տվեցին Իրաքի, Լիբիայի, Սերբիայի եւ Չեռնոգորիայի նկատմամբ ՄԱԿ-ի դատժամիջոցներին Ռուսաստանի միանալուն: Քննարկումները նախաձեռնել էին միջազգային հարցերով խորհրդարանական հանձնաժողովը եւ «Համաձայնություն հանուն առաջընթացի» դատգամավորական խմբակցությունը: Նրանց գնահատականներով ՄԱԿ-ի դատժամիջոցներին միանալով Ռուսաստանը կորցնում է ավելի քան 15 միլիարդ դոլար:

Ռուսաստանի ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Լավրովը խոսելով Հարավսլավիայի մասին, նշեց, որ ԱԳՆ «Հարավսլավիայի ճգնաժամի կարգավորմամբ վարում է հավասարակշռված գիծ»: Նրա խոսքերով, Անդրեյ Կոզիրեւը «ամեն ինչ արել է հարավսլավական հակամարտությանը վերջ տալու համար եւ Ռուսաստանը միացել է ՄԱԿ-ի դատժամիջոցներին միայն այն բանից հետո, երբ այլեւս ոչ մի փաստարկ չուներ դրանց դեմ»:

Արտաքին տնտեսական կապերի ներկայացուցիչ Իվան Կոֆանովը հայտարարեց, թե վնասի մասին ներկայացված թվերը զուտ դայմանական են: Փորձագետներից մեկի՝ դրոֆեսոր Լեւ Լյուբիմովի կարծիքով, ՄԱԿ-ի դատժամիջոցներին Մոսկվայի չմիանալը կբարդացներ Ռուսաստանի տնտեսական վիճակը, մասնավորապես կձգեր արտաքին դարտքի հարցի լուծումը: ■

«Արամ Խաչատրյան»
Ֆիլհարմոնիկ Համերգասրահ
3-ՐԴ ՀԱՄԵՐԳԱՇՐՋԱՆ
4485-4486 Հայոց Թվական
Համերգաշրջանի հովանավորն է Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը
Երեւանի սիմֆոնիկ նվագախումբ
«Հայաստանի եւ սփյուռքի դիրիժորներ»
27 դեկտեմբեր
Ամանորի տոնական ծրագիր
Հանրածանոթ սիմֆոնիկ երաժշտություն
Դիրիժոր՝ Գեւորգ Մուրադյան
Մեկնարկը՝ ժամը 14.00-ին:
Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-18-ը:

digitised by A.R.A.R.@

Լուսին

ԼՈՒՍԻՆ. 20 ՏԱՐԻ ԱՆՑ

Լուսնի վրա ամերիկացի աստղագնացների վերջին վայրէջքից 20 տարի անց նրա օգտագործման նոր ծրագրեր են մշակվել

1969-1972 թթ. ընթացքում ամերիկյան «Ապոլլո-11»ից մինչեւ «Ապոլլո-17» տիեզերանավերի թռիչքի շնորհիվ Լուսնի վրա վայրէջք կատարեցին եւ լուսնահողի վրա թողեցին 12 աստղագնացներ: Լուսնի վրա իջած վերջին երկու մարդիկ 1972 թ. դեկտեմբերի 11-ին ամերիկացիներ Ե. Սերնանը եւ Հ. Շմիտն էին: Դրանից հետո օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչությունը NASA-ն, այլեւս չվայելելով հանրության զորեղ աջակցությունը, հրաժարվեց մեր բնական արբանյակի հետագա ուսումնասիրությունից: Նա անմատչելի լաբորատորիայում փակեց 382 կգ լուսնաքարը եւ հետազոտման համար տրամադրեց դրա չնչին մասը, բանգարանում դրեց «Ապոլլո»ի դարկուցը եւ հանրահայտ լուսնային մոդուլը, իսկ վերջին տարիներին զբաղվում էր բանկարժեք վերօգտագործելի տիեզերանավերով:

1989 թ. Ջորջ Բուշը առաջարկեց Լուսնի վրա մշտական հենակետ ստեղծել կանոնավոր հետազոտությունների համար: Ի դեպ, Լուսնի ծագմանն առնչվող բոլոր վարկածներում հավասի է երեք բան. 1. Լուսինն ու Երկիրը նույն տարիքն ունեն, այսինքն ավելի քան 4 միլիարդ տարի. 2. Լուսնի միջին խտությունը 3.36 է, որը մոտ է Երկրի մանտիայի (երկրակեղեւի եւ միջուկի արանքում գտնվող 3000 կիլոմետրանոց շերտի) խտությանը. 3. Լուսնի բաղադրությունը շատ նման է Երկրի մանտիայի բաղադրությանը: Համակարգչով ստացված Լուսնի ծագման վերջին վարկածը հետեւյալն է. Լուսինը Երկրի մանտիայի մի բեկոր է, որը Երկրից պոկվել է Մարսի մեծության մոլորակի հետ բախման հետեւանքով: Այդ պահին մի քանի տասնյակ ժամում ծնունդ է առել Լուսինը, որի դիմագիծը հետագա հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում ընդհանուր առմամբ ձեւավորվել է երկնաքարերի հարվածների հետեւանքով:

Եվրոպացիների կարծիքով, իր իսկ կանոնավոր հետազոտություններից բացի, մեր արբանյակը կարող է օգտագործվել որպես տիեզերական աստղադիտարան եւ որպես հենակետ Մարսի նվաճման համար: Ավելի ուշ գուցե հնարավոր լինի որպես հեռանկարային վառելիք օգտագործել Լուսնի վրա շատ տարածված հելիում-3-ը: Ըստ այդմ Լուսնի հետազոտման տարբեր փուլերը վերուծված են Ֆրանսիայի տիեզերական հետազոտությունների ազգային կենտրոնի եւ Եվրոպայի տիեզերական գործակալության վերջերս հրատարակած «Լուսնային առաքելություն» զեկուցագրում:

Առաջին փուլում հարկ կլինի վերսկսել Լուսնի գիտական հետազոտական հետազոտությունը: Լուսնի դասմությունն այնքան սերտորեն է կապված Երկրի հետ, նրա ազդեցությունը երկրացիների վրա (մակընթացություններ, կենսաոիթմեր, առաստղեներ, բանաստեղծական ներշնչանք եւ այլն) այնքան զորեղ է, որ Լուսինն ընթռնելը կնշանակեր նաեւ ընթռնել Երկիրը, կյանքը, մարդուն: Արդ, քանի դեռ խոսքը Լուսնի վրա մարդ իջեցնելու կամ գիտական ենթակառուցվածքներ ստեղծելու մասին է, եվրոպական «Արիան-5» մոտ հրթիռները բավարար կլինեն: Ավելի ծանր բեռների համար կօգտագործվի ռուսական «Էներգիա» հրթիռը: Հարկ կլինի լուսնաուրջ ուղեծիր դուրս բերել գիտական նոր սարքեր Լուսնի կառուցվածքային եւ հանքաբանական ճշգրիտ քարտեզներ կազմելու համար: Այնուհետեւ Լուսնի վրա կիջեցվեն փոքր եւ շարժունակ ինքնաշխատ սարքեր տեղում հետազոտությունները խորացնելու համար:

Երկրորդ փուլում նախատեսվում է Լուսնի հակառակ կողմում տեղադրել օդտիկական աստղադիտակներ եւ ռադիոաստղադիտակներ: Երկրի խիտ եւ աղտոտված մթնոլորտը, ռադիոհեռուստատեսային բազմաթիվ ալիքների աղմուկը աննդաս դայմաններ են ստեղծում ռադիոաստղադիտակների աշխատանքի համար: Մինչդեռ Լուսնի վրա չկան ոչ երկրաշարժեր, ոչ քամիներ, ոչ դրանքերը բեկող մթնոլորտ, ոչ էլ խանգարիչ ռադիոալիքներ, եւ կա երկաթաթյա գիշեր: Իսկ Լուսնի բույլ ձգողականությունը (Երկրի ձգողականության մեկ վեցերորդը) թույլ կտա կիրառել աստղադիտակների շատ ավելի բերեւ կառուցվածքներ: Սակայն մթնոլորտի բացակայության դասճառով ոչինչ չի արգելակում մեր երկնաքարերի ազատ անկումը, որը կարող է շարքից հանել բանկարժեք սարքերը: Արեգակի ճառագայթման ճանապարհին եւս խոչընդոտներ չկան: Լուսնի բերությունները եւ նաեւ ցերեկային տաքը (+130 աստիճան) եւ գիշերային սառնամանիքը (-200 աստիճան), որոնք կարող են ձեւախեղել աստղադիտակների կառուցվածքները եւ խախտել հայելիները: Իսկ խոշոր գործիքներ ու սարքեր դասրաստելիս մարդու ներկայությունն անհրաժեշտ կլինի: Դրանից միջավայրը կաղտոտվի նախ հրթիռների գազերի արտանետման եւ ապա շինարարական մեքենաների տեղաշարժերի հետեւանքով: Վերջին դեպքում մինչեւ լուսնափոշու լրիվ իջնելը բավական շատ ժամանակ է անցնում: Հնարավոր է, որ դա կաղված լինի սասիկ էլեկտրականության հետ: Միջմոլորակային աղբագա շինարարները ավելի ճիշտ կվարվեին, եթե կիրառեին էկիմոսների սառցատնակների կառուցման տեխնիկան: Լուսնի վրա չկա ջուր, հետեւաբար նաեւ սառույց: Սակայն դեռեւ է որ ռեգոլիտը միակցված փոշուց կազմված այդ լուսնահողը հնարավոր լինի կտրել բլոկների, ինչպես Գրենլանդիայի սառած ձյունը: Այսդիսով, մեր երկնաքարերից եւ արեգակնային քամուց դաշտանվելու համար բավական կլինի Երկրից տանել փչովի կառուցվածքներ եւ դրանք ծածկել նման բլոկներով:

Երրորդ փուլում ծրագրվում է սկսել Լուսնի հանքաբանական շահագործումը: Արտաքուս լինելով սոսկ Երկրի մանտիայից պոկված մի բեկոր, Լուսինը կարծես թե հանքաբանական հավելյալ հետաքրքրություն չի ներկայացնում: Սակայն զուրկ լինելով մթնոլորտից մեր արբանյակը միլիարդավոր տարիների ընթացքում ենթակա է եղել տիեզերական ճառագայթների եւ արեգակնային քամու ազդեցությանը եւ այդպիսով կուտակել է արտերկրային գանձ՝ հելիում-3: Այդ նյութը դեյտերիումի հետ զուգորդված թույլ կտար ստանալ ջերմամիջուկային շատ հետաքրքիր ռեակցիաներ: Եթե այդ ռեակցիան իրագործվի Երկրի վրա (որը դեռ չի արվել) եւ լուծվի լուսնահողից հելիում-3-ի կորզման խնդիրը (որն անհարթահարելի է թվում), ապա մեր մոլորակի վրա նավթի վերջին կաթիլի այրումից հետո (որը կարող է դասահել ամենաուշը կես դար հետո) Լուսինը կդառնա մարդկության էներգետիկ փրկօղակը: Այն էլ ինչպիսի փրկօղակ: Մեր արբանյակը կկարողանա, օրինակ, ԱՄՆ-ին եռանդուժով ապահովել 45 հազար տարի:

Բայց՝ բացօթյա հանքավայր դառնալուն պես Լուսինը կորած կլինի աստղագետների եւ մոլորակաբանների համար: «Այդ դեպքում նա երջապատված կլիներ նստվածքային մթնոլորտով եւ փոշու ամպով, որոնք կխանգարեին աստղագիտական դիտարկումներին: Լուսնի դասմության շատ էջեր ընդմիշտ անհետացած կլինեին», զգուշացնում է Եվրոպայի տիեզերական գործակալության գիտական տնօրեն Ռոժե Մորիս Բոնեն:

Դեռեւս այդ վիճակում չենք հայտնվել: Բայց արդեն այժմվանից մարդկությունը դարտավոր է հստակորեն սահմանել մեր բնական արբանյակի իրավական կարգավիճակը: Ընդօրինակման է արժանի Անտարկտիդայի կարգավիճակը, որը մաքուր, ապառազմական եւ զուտ գիտական աշխարհամաս է եւ Լուսնի հետ որոշ ընդհանուր գծեր ունի:

Le Point, 12 դեկտեմբեր

Ռուսաստան

Կանայք զինված ուժերում

Այսօր 100 հազար կին է ծառայում Ռուսաստանի զինված ուժերում: Ինչպես հաղորդում է Դաշնակցային Ռուսաստանի դաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը, նրանցից ավելի քան 1100-ը սպայական դաշտոններում են, ավելի քան 20 հազարը դրաքորիկներ են:

Ամենից շատ կանայք կան ցամաքային զորքերում, մոտ 30 հազար, երկու անգամ դակաս ռազմածովային նավատորմում եւ ռազմաօդային ուժերում: Ներքին զորքերում է ավելի քան 1000 կին: Սպայական դաշտոնները զբաղեցնող բոլոր կանայք ունեն բարձրագույն կրթություն, դրաքորիկներից ավելի քան 4000-ը դիպլոմավոր բուժաշխատողներ են, մոտ 2500-ը կադավորներ:

Զինվորների եւ ծովայինների, ավագների եւ սերժանտների դաշտոններում կանանց ավելի լայն ներգրավելու Ռուսաստանի դաշտպանության նախարարի հրահանգի համաձայն այսօր զինված ուժեր կարող են ընդունվել չամուսնացած, երեխաներ չունեցող 19-40 տարեկան կանայք, որոնք ունեն առնվազն 8-ամյա կրթություն: Նրանց ծառայության ժամկետն է 2, 4 կամ 6 տարի: Ցանկության դեպքում այն կարող է երկարաձգվել: Պրադորիկներ եւ միջմաններ կարող են լինել կանայք, որոնց տարիքը չի անցնում 35-ից եւ որոնք ունեն բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն, որը համադատասխանում է տվյալ ռազմական մասնագիտությանը:

Սպայական դաշտոնների համար ընտրում են մինչեւ 30 տարեկան դահեստների աղաներին, որոնք ավարտել են բարձրագույն ուսումնական հաստատությունները եւ ստացել ռազմականին մոտիկ քաղաքացիական մասնագիտություն:

Կանայք կարող են ծառայության մեջ լինել մինչեւ 50 տարեկան հասակը: ■

ԱՊՀ

Քաղաքաղաքներն ընդհանուր հարցեր են քննարկում

Երկուշաբթի օրը Ալմա-Աթայում կայացավ ԱՊՀ երկրների մայրաքաղաքների ղեկավարների առաջին հանդիպումը: Դրան մասնակցում էին Ազգարբաղի, Բաքվի, Բիշքեկի, Դուշանբեի, Կիեւի, Մոսկվայի եւ Սանկտ-Պետերբուրգի ներկայացուցիչները:

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը մասնակիցների հետ հանդիպման ժամանակ հույս հայտնեց, որ նոր կազմակերպությունը կնպաստի բոլոր հանրապետություններում առկա տնտեսական ճգնաժամի հաղթահարմանը: Նա նշեց, որ Ղազախստանը շուկայական հարաբերությունների նախնական շրջանում կողմնակից է ուժեղ գործադիր իշխանությունների ստեղծմանը, բայց աղագայում քաղաքային իշխանությունների ղեկավարներին պետք է ընտրի ժողովուրդը, այլ ոչ թե նշանակի նախագահը:

Խոսելով ԱՊՀ երկրների ղեկավարների Մինսկում կայանալիք հանդիպման մասին, Նազարբաեւը նշեց, որ առկա դժվարությունները կարելի է հաղթահարել միայն համատեղ ջանքերով եւ նախկին համաձայնությունները կատարելով: Նա կարծում է, որ Մինսկում անհրաժեշտ է ստորագրել «Հաագայի տիպի» միջազգային դատարանի ակտ, ինչպես նաեւ պետք է դայմանավորվել մշտապես գործող բանկային միության մասին: ■

Սանկտ-Պետերբուրգի բորսաների եւ բանկերի մի շարք ներկայացուցիչների կարծիքով մերձավոր արտասահմանյան դետությունների կոմերցիոն կառուցվածքներում-ռուբլու զգալի կուտակումների դատճառով «էմիգրանտ» ռուբլիները կարող են հայտնվել ռուսական շուկայում: Եթե դա տեղի ունենա, ապա դեռ այս տարում ԱՄՆ-ի դոլարի կուրսը կարող է հասնել 600 ռուբլու:

Լուրերի Հոսք

Սերբերը նախընտրում են դայքարել մինչեւ վերջ

Հարավսլավիայում տեղի ունեցած նախագահական ընտրությունների նախնական արդյունքների համաձայն, երկրի վարչապետ Միլան Պանիչը ստացել է ընտրողների ձայների 36 տոկոսը, իսկ Սերբիայի նախագահ Միլոշեւիչը՝ 44 տոկոսը: Առաջին ընտրական տեղամասերում մեծ հաջողության է հասել ծայրահեղ ազգայնականների կողմից առաջադրված նախագահական թեկնածուն, ինչը դիտորդների կարծիքով վկայում է սերբերի դատրաստակամության մասին մինչեւ վերջ դայքարել սերբական տարածքների միավորման համար: Պանիչը, որի ընտրությունը խիստ նախընտրելի էր Արեւմուտքի համար, դահանջել է չեղյալ հայտարարել ընտրությունների արդյունքները, մեղադրելով Միլոշեւիչին արդյունքների կեղծարարության մեջ: Ընտրություններին մասնակցած արեւմտյան դիտորդները հաստատում են կեղծարարության փաստերը, սակայն առայժմ եզրակացություն չեն տվել նոր ընտրությունների կազմակերպման անհրաժեշտության վերաբերյալ: Եվրահամայնքը նախազգուշացրել է Միլոշեւիչին, որ նախագահի դաշտոնում ընտրվելու դեպքում նա դետք է արմատաորես վերանայի իր արտաքին քաղաքականությունը, առանձնապես Բոսնիայի եւ Խորվաթիայի հետ փոխհարաբերությունները:

Ռաբինը իսլամականներին չի կարեկցում

Ինչպես հաղորդում է BBC կայանը, Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինը ելույթ ունենալով կնեսետում հայտարարել է, թե իսլամական արմատականներին Իսրայել չի վերադարձնելու: «Ես գիտեմ, որ նրանք այդ խիստ ծանր վիճակում են, բայց իմ սրտում նրանց նկատմամբ կարեկցանք չկա», ասել է Ռաբինը:

Թուրքական ոստիկանությունը դիմում է խոշտանգումների

BBC կայանը հաղորդում է, որ Եվրոպական խորհուրդը հրատարակել է մի փաստաթուղթ, ուր ասվում է, թե թուրքական ոստիկանությունը շարունակում է կիրառել խոշտանգումների եւ կտանջների դրակտիկան կալանավորների նկատմամբ:

Կիմ Յանգ Սամը Հարավ-Կորեայի նախագահ

Քվեների 42 տոկոսը հավաքելով Կիմ Յանգ Սամը դարձավ Հարավային Կորեայի առաջին քաղաքացիական նախագահը: Նրա անմիջական մրցակիցը՝ Կիմ Դաե Ջանգը Դեմոկրատական կուսակցությունից, հավաքեց քվեների 34 տոկոսը: Նորընտիր նախագահը, որի երդմնառությունը այս տարեվերջին տեղի կունենա Սեուլում, 2 տարի առաջ երկրի ընդդիմության շարքերից պնդել էր իշխող՝ Ռամկավար ազատական կուսակցության շարքերը:

Գալինա Ստարովոյտովան հիմնադիր ժողովի կողմնակից

Ռուսաստանի նախագահի ազգային քաղաքականության հարցերով նախկին խորհրդական Գալինա Ստարովոյտովան հայտարարեց, որ ինքը դրականորեն է վերաբերում հիմնադիր ժողովի գումարման գաղափարին, որը դետք է ընդունի նոր Սահմանադրությունը եւ ընտրությունների մասին օրենքը: Պարզաբանելով անցյալում ունեցած իր հակասական վերաբերմունքը հանրաքվեի անցկացման նկատմամբ, Գալինա Ստարովոյտովան նշեց, որ «կարծում է, թե 1993 թ. ապրիլի 11-ին հնարավոր կլինի հաջողությամբ անցկացնել հայտարարված հանրաքվեն եւ դրանով հանդերձ փոխել Ռուսաստանի ընկերային քաղաքական կարգը»: Գալինա Ստարովոյտովան գտնում է, որ ավելի լավ հարցը կլուծի բազմակուսակցական հիման վրա, ուղիղ եւ գաղտնի քվեարկությամբ հատուկ ընտրված հիմնադիր ժողովը: ■

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Վրաստանում լուծարվել են ռազմադաշտային դատարանները

Վերջերս հրապարակումներ են եղել, թե Սուխումում Վրաստանի պաշտպանության նախարարության ռազմադաշտային դատարան է ստեղծվել, որը մահվան է դատապարտել երկու հոգու: Վրաստանի դատախազությունը հանդես է եկել հայտարարությամբ, որի մեջ ասվում է, թե այդ հրապարակումից անմիջապես հետո Վրաստանի դատախազությունը պահանջել է դադարեցնել ռազմադաշտային դատարանի գործունեությունը որպես ոչ սահմանադրական մարմնի: Սուխումի ռազմադաշտային դատարանը լուծարվեց, ռազմական դատախազությանը հանձնարարվեց ստուգել ռազմադաշտային դատարանի կողմից ընված գործերը եւ եզրակացությունների ճշտությունը:

Ալեքսանդր Ստելիգով. Սլավոնական գաղափարների կողմնակիցները կպայքարեն Հարավսլավիայի համար

Եթե ՄԱԿ-ի դրոշի տակ ներխուժում կատարվի Հարավսլավիա, Ռուսաստանում կլինեն «մեծ բանակությամբ կամավորներ, որոնք կպաշտպանեն սլավոն եղբայրներին», «ԻՖ»-ին հայտարարեց Ռուսական ազգային տաճար կազմակերպության համանախագահ Ալեքսանդր Ստելիգովը: Ի դեպ, նրա խոսքերով, խոսքը գնում է ոչ թե առանձին խմբերի մասին, այլ «սլավոնական ազգային գաղափարների կողմնակիցներից կազմված ամբողջ գումարակների»: Նրա համոզմամբ, դրսից ցանկացած ներխուժում ավելի կտրի վիճակը նախկին Հարավսլավիայում, պարտիզանական պատերազմի պատճառ կդառնա: Նա նշեց, որ «Սլավոնական տաճար» կազմակերպության շրջանակներում այս կապակցությամբ համաձայնություն է ձեռք բերվել Լեհաստանի, Սերբիայի, Չեխոսլովակիայի, Սլովակիայի եւ Բուլղարիայի համախոհների միջեւ:

Չերբակալվել են 80 կգ ուրան հափշտակողները

Ռուսաստանի իրավապահ մարմինները ձերբակալել են հանցագործ մի խումբ, որը զբաղվում էր Ուզբեկիստանի Գլազով քաղաքի փակ գործարանից ուրան գողանալով եւ այն արտասահմանում վաճառելով: Ինչպես «ԻՖ»-ին հայտնի դարձավ Ռուսաստանի դատախազությունում, Ուզբեկիստանում, Բելառուսում եւ Լիտվայում ձերբակալվել են 13 մարդ, որոնց մոտ հայտնաբերվել է 80 կգ ուրան: Պարզվել է, որ գողոնի միայն փոքր մասն է իրացվել: Հիմնական մասը պետք է վաճառվեր Լեհաստանում:

ԱՊՀ երկրների ղեկավարներն առաջարկում են կրկին հետաձգել Մինսկի հանդիպումը

Ինչպես «ԻՖ»-ին հայտնի դարձավ վստահելի աղբյուրներից, ԱՊՀ երկրների մի շարք ղեկավարներ դեկտեմբերի 25-ին նշանակված Մինսկի հանդիպումը հետաձգելու ցանկություն են հայտնել: «ԻՖ»-ի տվյալներով, դա բացատրվում է տարեվերջին նրանց աշխատանքի գերլարված բնույթով: Փորձագետները կարծում են, որ արդեն երրորդ անգամ հետաձգված հանդիպումը կարող է կայանալ հունվարի կեսին:

Ամերիկյան ազատ առեւտուր Կանադայի եւ Մեքսիկայի հետ

Բուշը ստորագրեց Կանադայի եւ Մեքսիկայի հետ ազատ առեւտրի 2 պայմանագիր, որոնք միանշանակ չեն ընդունվելու իր երկրի քաղաքական շրջանակների կողմից: «Հյուսիսում բարգավաճման պայթյունը» կանխելու մտահոգությամբ ստորագրված այդ պայմանագրերը դեռեւս պետք է վավերացվեն բոլոր երեք երկրների օրենսդիր մարմինների կողմից:

Զանազան

Ամերիկյան արվեստի խնամակալ

Բալետ

Այս տարվա աշնանային բաստրաջանի ամենանշանակալից իրադարձություններից մեկը պետք է համարել Փոլ Թեյլորի «Ընկերակցություն Բ» բալետային նոր ներկայացումը՝ բեմադրված Էնդրյու Ֆույրերի եռյակի երգերի հիման վրա: Այդ երգերն իրենց վառակիչ ռիթմերի եւ կենսախնդության շնորհիվ շատ են օգնել ամերիկացիներին համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ: Մինչ այդ Թեյլորը երբեք չէր օգտվել հանրածանոթ երաժշտությունից՝ այն գտնելով ոչ հարմար բալետի համար: Այդուհանդերձ իր նոր բեմադրության համար արվեստագետն ընտրեց հիշյալ երգերը: Այդ մասին նա գրում է. «Էնդրյու Ֆույրերի այդ հին ձայնասկավառակները ես միշտ սիրում էի լսել, երբ ուզում էի բարձրացնել տրամադրությունս: Դրանից հետո ինձ այլեւս ոչինչ պետք չէր»:

Քննադատները համաձայն են ասվածի հետ: «Վիլլիջ վոյս» թերթում Դեբորա Ջոուիսը հետեւյալն է գրում. «Նրանք, ովքեր բավականաչափ տարիք ունեն, որպեսզի ձայնակցեն ծանոթ մեղեդիներին, ուրախ են տեսնել, թե որքան սրամիտ են դրանք մարմնավորված պարերի մեջ: Իսկ երիտասարդ հանդիսատեսներին դուր է գալիս պարածեւերի այն վիրտուոզությունը, որ ստեղծել է Թեյլորը»:

Երաժշտություն

Ռոք-կիթառահար, երգիչ եւ երգային տեքստերի հեղինակ Լու Ռիդը իր առաջին ձայնասկավառակի թողարկման 35-ամյա հոբելյանը նշանավորեց նոր «Կախարդանք եւ կորուստներ» ալբոմի եւ իր երգային տեքստերն ամփոփող «Մտքի եւ արտահայտության միջեւ» գրքի լույս ընծայմամբ: Ռիդն առաջին անգամ հռչակվեց «Վելվեթ անդերգراունդ» խմբի կազմում: Դա 60-ականների կեսերին էր:

Այս խումբը հայտնի էր իր էլեկտրոնային ձայնեղանակների բարդությամբ եւ արեւելյան երաժշտության հանդեպ ունեցած հակվածությամբ: Սկսած այդ շրջանից Ռիդը հանդես է եկել եւ ձայնագրել իր երգերը: Թեեւ «Կախարդանք եւ կորուստներ»-ում նկատվում է որոշակի թեմատիկ նահանջ ռոք-ն-ռոլլից, այնուամենայնիվ այն իրենից ներկայացնում է ռոք երգերի շարք: Վերջինիս մեջ պատմվում է քաղաքներից մահացող մարդու տառապանքի եւ մտածումների մասին: Ինչպես «Նյուզուիք» ամսագրի երաժշտական քննադատ Դեյվիդ Գեյբսն է գրում այդ երաժշտության մասին, «Սա ամենահասուն ռոք-ն-ռոլլն է, որ ես երբեւէ լսել եմ: Այս ռոք-ն-ռոլլը, որի մասին խոսում է բմբուկի յուրահանչյուր հարված եւ կիթառի ամեն մի ակորդ, կաղրի հավերժ»:

Ճարտարապետություն

Ամերիկայի հայտնագործման 500-ամյակի կապակցությամբ Միացյալ Նահանգներում կազմակերպվեցին մշակութային շատ միջոցառումներ, շարք մտան նոր կառույցներ: Դրանցից հարկ է հիշատակել Ինդիանապոլիսում (Ինդիանայի նահանգ) կառուցված Ամերիկյան հնդկացիների թանգարանը:

Այս շինությանն գլխավոր ճարտարապետ Ջոնաթան Հեսսն իր նախագիծն անելիս ոգեշնչվել է ամերիկյան հարավ-արեւմուտքի ճարտարվեստի հայտնի ավանդույթներից՝ ստեղծագործական հետագա զարգացման հասցնելով դրանք: Շինությունը զբաղեցնում է յոթ հազար քառակուսի մետր տարածք: Նրա պարզ երկրաչափական ձեւերի, քարի փորագրությունների շնորհիվ շենքն արտահայտում է պուեբլո ցեղի հնդկացիական ոգին: Թանգարանն անվանակոչվել է Ինդիանապոլիսից արվեստների հովանավոր Հարիսոն Այթելյոզի անունով:



Ըստ օտար մամուլի
նյութերի պատրաստեց
ԼԵՎՈՆ ԼԱԾԻԿՅԱՆԸ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

ՋՈՆ ՄԱՔԻՆՐՈՅ. «ԱՆՑՆՈՒՄ ԵՄ ԹՈՇԱԿԻ»

«Ոսկե սաղավարտ» մրցանակի խաղարկությունը կլինի իմ վերջին պաշտոնական հանդիպումը պրոֆեսիոնալ թենիսում եւ ամենայն հավանականությամբ կանցնեմ թոշակի», այսպիսի հայտարարությամբ Մյունխենի «Օլիմպիկհալլե» հյուրանոցի դահլիճում կայացած մամուլի ասուլիսում հանդես է եկել մեծ թենիսի ամենանշանավոր դեմքերից մեկը՝ ամերիկացի Ջոն Մաքինրոյը:

Երեսուներեքամյա մարզիկը թենիսում հասել է ակնառու հաջողությունների: Չորս տարի պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ԱՏՊ) կողմից ճանաչվել է աշխարհի լավագույն թենիսիստը (1981-1984 թթ.): Հինգ տարի անընդմեջ մասնակցելով Ուիմբլդոնի մրցաշարի եզրափակչին, երեք անգամ (1981, 1983, 1984 թթ.) դարձել է հաղթող: 1979, 1980, 1981, 1984 թթ. դարձել է ԱՄՆ-ի բաց առաջնության չեմպիոն: Իսկ Դեւիսի գավաթի խաղարկության պատմության մեջ հասել է նշանակալից հաջողության: Սկսած 1978 թ. «Արծաթյա սալաթամանի» խաղարկության եզրափակիչում անհատական հանդիպումներում հաղթել է 41 խաղում, պարտվել միայն 8-ում, իսկ զուգախաղերում համապատասխանաբար 18 եւ 2:

Սակայն ծախլիկ թենիսիստը մարզական աշխարհին հայտնի էր ոչ միայն իր գեղեցիկ խաղով, այլեւ իր սկանդալային բնավորությամբ: Ողջ մարզական կենսագրության ընթացքում նրա փայլուն խաղը զուգակցվում էր տարբեր վիրավորանքներով եւ մրցավարների, եւ մրցակիցների, եւ լրագրողների, եւ նույնիսկ հանդիսատեսների նկատմամբ:

Սկանդալիստի փառքը կրկնակոխ հետեւում էր նրան մրցաշարից մրցաշար: Մաքինրոյի վրա չէին ազդում ոչ ֆինանսատությունը մամուլում, ոչ դրամական տուգանքները, ոչ էլ բազմաթիվ որակազրկումները:

Տարբեր կարծիքներ էին արտահայտվում նրա վարքի մասին, որ նա վատ է դաստիարակված, որ շատ տաքդուն է (նրա երակներում հոսում է իռլանդացու արյուն), որ նա այդ ամենն անում է հանդիսատեսների համար եւ այլն: Սակայն երբեմն նա այքի էր ընկնում իր «փափուկ» բնավորությամբ:

Այսպես, ամերիկյան Ատլանտա քաղաքի «Ֆորում» դահլիճում կայացած մրցաշարում Բորիս Բեկերի հետ հանդիպումից հետո նա ժամից ավելի ինքնագիր էր բաժանում հանդիսատեսներին եւ կորցրեց վերջին թոքակտորը: Չնայած այն բանին, որ այդ ժամանակ նրան էին սպասում մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամները եւ հեռուստատեսության մեկնաբանը, որը ուղիղ եթերում հարցազրույց պետք է վարեր նրա հետ:

Շատերի կարծիքով, Մաքինրոյի հեռանալու հիմնական պատճառը նրա ընտանեկան կյանքն է: Նրա կինը՝ դերասանուհի, Օսկարի մրցանակակիր Թաթում Օ՝Նիլն ապահարզան է տվել:

Նա արդեն լքել է իրենց ծովափնյա տունը, որը գնահատվում է երեք միլիոն դոլլար եւ տեղափոխվել Նյու Յորքի իր մեկուկես միլիոնանոց ապարանքը: Ջոնը եւ Թաթումը ամուսնացել էին 1986 թ. եւ երեք երեխա ունեն: Ըստ լրատվական աղբյուրների, Մաքինրոյի կարողությունը 150 միլիոն դոլլար է եւ բաժանման դեպքում Օ՝Նիլին բաժին կհասնի միայն 20 միլիոն: Իսկ եթե նա ապահարզան տա Կալիֆորնիայում, ապա ամենայն հավանականությամբ նա «ձեռք կգցի» կարողության ուղիղ կեսը, որը Ջոնը վաստակել է իրենց համատեղ կյանքի ընթացքում: ■

Վերականգնված հեղինակություն

Հարավային Ամերիկայում իր շրջագայությունն է շարունակում Գերմանիայի ֆուտբոլի հավաքականը: Հերթական խաղում Մոնտեվիդեոյում հանդիպելով Ուրուգվայի հավաքականի հետ, աշխարհի չեմպիոնները 4:1 խոշոր հաշվով առավելության հասան նրա նկատմամբ: Գերմանիայի հավաքականի մարզիչ Բերտի Ֆոգսը կարող է թեթեւացած շունչ քաշել, քանի որ այս հաղթանակը ինչ-որ չափով վերականգնեց նրա հեղինակությունը, որը սասանվել էր Բրազիլիայի հավաքականից պարտություն կրելուց հետո: Չէ որ հենց այդ պարտությունից հետո էր, որ խոսակցություններ գնացին նրան հավաքականի մարզչի պաշտոնից ազատելու մասին:

Հավաքականի ավագ, 1990 թ. աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Լոթար Մաթեուսը անցկացրեց իր 93-րդ հանդիպումը Գերմանիայի հավաքականի կազմում եւ այդ արդյունքով շրջանցեց իր մարզիչ Ֆոգսին: Իսկ անցկացված խաղերով առաջին տեղում է Ֆրանց Բեկենբաուերը՝ 103 խաղ: ■

Բարեգործությո՞ւն երեխաների համար

Ծննդյան տոներին Լոնդոնում կկայանա շախմատային մեծ տոնահանդես: Շախմատի աշխարհի չեմպիոն Գարի Կասպարովը միաժամանակյա խաղի սեանս կանցկացնի: 120 տախտակների վրա նա հանդիպումներ կունենա Անգլիայի նշանավոր մարդկանց՝ քաղաքական գործիչների, բիզնեսմենների, գրողների, դերասանների եւ այլոց հետ: Խաղին մասնակցելու համար յուրաքանչյուր ցանկացող պետք է վճարի 1000 ֆունտ ստեռլինգ: Խաղը բարեգործական է եւ կայացած ողջ հասույթը կտրամադրվի հիվանդ երեխաների հիմնադրամին:

Ակամայից հիշում եմ անգլիացի կատակերգու դերասան Նորման Ուիզդոմի հետ Պիտկինին եւ նրա խոսքերը: «Պարոնայք, մի՞թե երեխաներին օգնելու համար շեղ տոնահանդես է պետք կազմակերպել, երգել եւ ուրախանալ: Հասկացեք, որ ձեր այդ չնչին գումարներով չեք օգնի տառապող երեխաներին, եւ ձեր այս շեղ տոնահանդեսը ոչինչ չի տա նրանց»: ■

Անակնկալ հաղթանակ

Մոսկվա եւ Սանկտ-Պետերբուրգ քաղաքներում ավարտվեց «Իզվեստիա» թերթի մրցանակի հոկտեմբերյան միջազգային մրցաշարը: Շատերի համար անսպասելի մրցաշարի հաղթող դարձավ երիտասարդ հոկեյիստներով համալրված Ռուսաստանի օլիմպիական հավաքականը, որը եզրափակիչ խաղում համառ պայքարում 2:1 հաշվով առավելության հասավ անհամեմատ ուժեղ Չեխոսլովակիայի հավաքականի նկատմամբ:

Երրորդ տեղի համար պայքարում Ռուսաստանի առաջին հավաքականը 4:1 հաշվով հաղթեց աշխարհի ներկայիս չեմպիոն Շվեդիայի հավաքականին: 5-րդ տեղի համար մրցապայքարում Ֆիններն 3:1 հաշվով հաղթեցին Շվեյցարիայի հավաքականին, իսկ 7-րդ տեղը զբաղեցրեց Կանադայի հավաքականը, հաղթելով Գերմանիայի հավաքականին՝ 6:1: Սա վերջին փորձությունն էր գալիք տարվա գարնանը Գերմանիայում կայանալիք աշխարհի հերթական առաջնությունից առաջ:

ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Եվրոպայի առաջնության դարտիաներից

Կ. Ուրբան (Լեհաստան)-
Ա. Անասասյան (Հայաստան)

Հնդկական պաշտպանություն

1. d4 ձf6 2. c4 e6 3. g3 c5 4. d5 ed 5. cd d6 6. ձc3 g6 7. փg2 փg7 8. ձf3 0-0 9. 0-0 փd7 10. փf4 Թe7 11. նe1 ձa6 12. h3 նfe8 13. e4 ձh5 14. փg5 Թf8 15. g4 h6 16. փd2 ձf6 17. ձf4 g5 18. փh2 c4 19. e5 de 20. ձ:e5 ձb4 21. Թd2 Թc5 22. ձ:d7 ձ:d7 23. ն:e8+ ն:e8 24. ձe4



24. ...ն:e4 25. փ:e4 c3 26. bc փ:c3 27. Թd1 փ:a1 28. Թ:a1 ձ:d5 29. Թb1 b6 30. փh7+ Ug7 31.փf5 ձ7f6 32. փe5 ձf4 33. Թb2 Թc6 34. փ:f4 gf 35. Թe5 Թd5 36. Թ:f4 Թ:a2 37. g5 Թa1+ 38. Թg2 hg 39. Թ:g5+ Uf8 40. Թh6+ Ue7 41. Թe3+ Թd6 42. Թd3+ Թe5 43. փc8 Թd4 44. Թg3+ Թf4 45. Թc3+ Ud6 46. փb7 Ud7 47. փf3 Թd6 48. Թb3 Ue7 49. Թe3+ Ud7 50. Թb3 Թe6 51. Թd3+ Ue8 52. Թa6 Թd7 53. փb7 Թd6 54. Թ:a7 ձh5 55. Թa4+ Uf8 56. Թg4 ձf4+ 57. Uh1 b5 58. փf3 b4 59. Թc8+ Ue7 60. Թc4 Uf6 61. Թc8 Ug7 62. Թg4+ ձg6 63. փd1 Թd3 64. փe2 Թc3 65. փf3 b3 66. h4 b2 67. փe4 Թb4 68. Թf5 Թe1+ 69. Uh2 Թc1 70. Ug3 Թc7+ 71. Uh3 Թe5 72. h5 Թ:f5+ 73. փ:f5 ձe7 74. փc2 ձd5 75. Ug4 Uf6 76. h6 ձc3 77. h7 Ug7 78. Ug5 b1Թ 79.փ:b1 ձ:b1, սպիտակները հանձնվեցին: ■

digitised by A.R.A.R.@

Պատկերասրահ

ՆԿԱՐ ԱՌԵՎԱՆԳՈՂՆԵՐԸ ԴԵՌԵՎՍ ԱՆՀԱՅՏ

Պատկերասրահի տնօրենը պարզաբանում է

Արվեստասեր հասարակայնությանը ծանոթ է հուզել մեր ազգային դասկերասրահից վերջերս անհայտացած Լեւիտանի վրձնին դասկանող նկարի ճակատագիրը: Մանավանդ մտահոգիչ է, որ ընդամենը ամիսկեսի ընթացքում մեր գլխավոր թանգարանից տարվեցին երկու գեղարվեստական արժեքներ՝ հոլանդացի անհայտ մի նկարչի գործ եւ Լեւիտանի մի փոքրիկ էսքիզ: Մտահոգողը նաեւ քննչական աշխատանքների դանդաղությունն է, այն առ այսօր ոչ մի արդյունք չի տվել: Ազգային դասկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը հատատ համոզված է, որ երկու գողություններն էլ նույն ձեռքն է արել, նույն տեղից թելադրվել: Ընդ որում տնօրենը դրանք բացատրեց միմիայն ներսի անձի անմիջական մասնակցությամբ եւ նկատելի աջակցությամբ դրանում անողայման տեսնելով ակնհայտ չարամտություն: Բանն այն է, որ, ըստ դրն. Խաչատրյանի, միայն գիտակ մարդը կարող էր այդքան վստահ գործել եւ մոտենալ էտակաղես այն նկարին, որ, ասենք, դյուրությամբ կարելի է հանել շրջանակից: «Գաղտնիք չէ, շարունակեց իր խոսքը Շ. Խաչատրյանը, որ երկու տարի է արդեն, ինչ տարբեր թերթերում զրպարտչության հասնող կեղծիք դարունակող հոդվածներ են տպագրվում դասկերասրահի եւ նրա տնօրենի դեմ: Քանի որ հոդվածները կորցրին իրենց ուժը, տեղի ունեցավ մի բան, որ ինձ համար անսպասելի էր: Կողոպտիչը անողասնաց նախօրոք ցուցմունք է ունեցել ներսի մարդուց, ուստի ես մեր քննչական մարմիններին խնդրում եմ իրենց քննությունը տանել նաեւ այս ուղղությամբ»:

Դրն. Շ. Խաչատրյանը օրերս վերադարձավ Դեսդոյտից, որտեղ գտնվում էր թանգարանների միջազգային գիտաժողովին մասնակցելու հրավերով: Այցը ունեցել է նաեւ գործնական նշանակություն: «Օգտակար եղավ ցուցադրանքում գտնվող նկարների հատկաղես փոքրաչափ ստեղծագործությունների աղահովության գործն ավելի արդյունավետ կազմակերդելու համար»: Թե կոնկրետ ինչ նկատի ուներ նա, հավանաբար կերեւա մոտ աղագայում: Հուսադրող էր, նաեւ այն, որ դասկերասրահի տնօրինությունը առեւանգման այդ փաստի մասին հայտնել է նկարների միջազգային աճուրդի կենտրոններին, ուստի բացառվում է գողացված նկարների վաճառքը միջազգային շուկայում:

Այո, դարձյալ, ինչպես միշտ, ուշանում ենք: Հիվանդությունը կանխարգելելու փոխարեն ուշացումով մտածում ենք դրա բուժման արդյունավետ եղանակների որոնման մասին: Այս խնդրում էականը շեշտադրության փոփոխությունն է: Թանգարանային արժեքների դահդանության գործը միայն տվյալ թանգարանի աշխատողների հոգսն ու գործը չէ: Դա համաղեսական ու ազգային խնդիր է, որ դիտի հուզի եւ մասնավորաղես մշակույթի նախարարությանը, եւ կառավարությանն ամբողջաղես: Չի կարելի թույլ տալ, որ տնտեսական ու բարոյական արդեն ահագնացող կորուստներին ավելանան նաեւ գեղարվեստական կորուստները:

ԼԵՎՈՆ ԼԱՇԻԿՅԱՆ

Փ Ն Տ Ր Վ Ո Ւ Մ է

ՎԱՆ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Ամերիկայից փնտրում է իր ազգական
ԱՂԱՎՆԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
բարեկամներ
ՍԱԹԵՆԻԿ ՀՈՒՆԵՑՅԱՆԻՆ եւ ՀԵՂՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ:

Վերջին տեղեկությունների համաձայն, Աղավնիկ Աբրահամյանը հաստատվել է Ռուսիայի Սոչի քաղաքում: Աղավնիկն ուներ մի դուստր՝ Ազգանոշ, որի ամուսինն էր Սմբատը (ազգանունն անհայտ): Նա նույնպես ունեցել է մի որդի՝ Վարդգես անունով, երկուսն էլ Երեւան քաղաքի բնակիչներ են եղել: Փնտրող Վան Գրիգորյան, ծնողներն են Ագնես Գալստյանը եւ Ջորջ Օ. Գրիգորյանը: Հայրական պապն է Շիմիսգեսեգցի Օկսեն Գրիգորյանը: Պապի ծնողներն էին Խաբունն ու Գրիգորը: Նրանք ունեցել են 5 զավակներ՝ որդի Օկսենը եւ 4 դուստր, որոնցից մեկն էր Աղավնիկ Աբրահամյանը (ամուսնական ազգանունով):

Խնդրվում է տեղեկության դեպքում հեռաձայնել 52-95-13 կամ 56-06-74, Երեւան

Մոսկվա

Կառավարության կազմը համաձայնեցված է

Երեկ Գերագույն խորհրդի նիստում ելույթ ունենալուց հետո Դաշնակցային Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չերնոմիրդինը հաղորդեց լրագրողներին, որ կաբինետի անհատական կազմը «սկզբունքորեն հարմարեցված է» եւ «կտրուկ փոփոխություններ չեն նախատեսվում»: Կաբինետի ղեկավարն ավելացրեց, որ նախագահի հետ սկզբունքային տարաձայնություններ չկան այդ հարցի վերաբերյալ: Չերնոմիրդինի խոսքերով, Բորիս Ելցինի հրամանագրի համաձայն կաբինետի կազմի թեկնածուների անունները հայտնի կլինեն «այսօր-վաղը»:

Չերնոմիրդինը գոհունակություն հայտնեց խորհրդարանում կառավարության մասին օրենքի քննարկման ընթացքով (պատգամավորները հաստատեցին նախագահի 6 ուղղումներից 3-ը): Վարչապետի կարծիքով, խորհրդարանն ընդունել է դեսության ղեկավարի կողմից ներկայացված ամենակարեւոր եւ էական ուղղումները:

Ինչպես հայտնի դարձավ «ԻՏՆ»ին, Վ. Չերնոմիրդինը նիստերի ընդմիջմանը զրույց է ունեցել Գերագույն խորհրդի ղեկավարության ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում մասնավորաղես շոշափվում էր նոր կաբինետի անհատական կազմի մասին հարցը: ■

Տաջիկստան

Հրեաները հեռանում են Դուշանբեից

Վերջին երեք տարում Տաջիկստանի մայրաքաղաքից հեռացել են 15 հազար հրեաներից 10 հազարը, «ԻՏՆ»ին հայտնել է հրեական մշակույթի բարեկամների տեղական ընկերության համանախագահ Միերխաիմ Գավրիելովը: Որպես հեռանալու գլխավոր դատճառներ նա նշել է քաղաքական իրավիճակի անկայունությունը, կյանքի անվտանգության երաշխիքների բացակայությունը, ավելացնելով, որ Տաջիկստանում երբեք հակահրեական տրամադրություններ չեն եղել: ■

Զենքի կրճատում

Պայմանագիրը դատապարտ է լավագույնս

Ստրատեգիական հարձակողական զենքերի կրճատման մասին ռուս-ամերիկյան դայմանագիրը «դատապարտ է լավագույն կերդով»: Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի նախագահներ Բ. Ելցինի եւ Ջ. Բուշի հանդիդումը հունվար ամսին «միանգամայն հնարավոր է»: Այդ մասին երեկ «ԻՏՆ»ի թղթակցին հայտնեց Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը:

Նա ասաց, որ օրվա ընթացքում բազմիցս բանակցություններ է վարում հեռախոսով ԱՄՆ-ի դետքարտուղար Լոուրենս Իգլբերգերի հետ եւ քննարկում մնացած հարցերը: Նախարարի խոսքերով, ռուս-ամերիկյան բանակցությունները, այդ թվում բարձր մակարդակով, այժմ շատ ինտենսիվ են: Բանակցություններին մասնակցում են տարբեր գերատեսչություններ, մասնավորաղես երկու երկրների դաշտդանության նախարարությունները: Այսօր Ժենեւում Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի փորձագետները կսկսեն աշխատել փաստաթղթի վերջնական տեքստի վրա: Ռուսաստանի դատվիրակությունը գլխավորում են արտգործնախարարի տեղակալներ Գեորգի Մամեդովը եւ Գրիգորի Բերդեննիկովը: ■

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՀԱՅՏՆՈՒՄ է

Վերջերս Ֆրանսիայի դեսդանատունը «Հրազդան» հյուրանոցի շենքում բացեց հյուդատոսական ծառայություն. հեռ. 53.18.96: Վարչական այն ձեւականությունները, որ առաջ իրականացվում էին Մոսկվայում Ֆրանսիայի դեսդանատանը, այսուհետեւ կկատարվեն բացառաղես նրա հյուդատոսական բաժնում:

Դեսդանատան հյուդատոսական բաժինը գործում է երկուշաբթի օրից ուրբաթ՝ ժամը 9:30-ից 13:30: Կարճատեւ ուղեւորության այցագրերի համար (մինչեւ 90 օր) դահանջվում են հետեւյալ փաստաթղթերը. ընտանեկան այցերի համար՝ հրավեր (certificat d'hébergement) եւ երթուղարձի տոմս, զբոսաշրջիկային այցերի եւ դեղի այլ երկրներ տարանցիկ ուղեւորության համար՝ երթուղարձի տոմս:

Բոլոր դեղերում անձնագրերի ստացման ժամկետը 4 շաբաթ է: Ֆրանսահդատակ քաղաքացիների ընդունելությունը նույնդես՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 9:30-ից 13:30:

Ննդյան տոների առթիվ դեսդանատունը փակ է դեկտեմբերի 25-ին:

Մոսկվա

Ժիրինովսկին արտգործնախարա՞ր

Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության Գերագույն խորհուրդը դիմել է Բ. Ելցինին եւ Վ. Չերնոմիրդինին Վլադիմիր Ժիրինովսկուն արտգործնախարար նշանակելու խնդրանքով: Ռուսաստանի ղեկավարությանը հղած նամակում նշվում է, որ Վ. Ժիրինովսկին տիրապետում է 4 օտար լեզուների, ունի իրավաբան-միջազգայնագետի կրթություն, ինչպես նաեւ արեւելագետի դիպլոմ: Բացի այդ փաստաթղթում նշվում է, որ Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության աշխարհաքաղաքական կանխագուշակումները միշտ իրականանում են: Այդ ամենը դրեմ է Վ. Ժիրինովսկուն անփոխարինելի դարձնեն Ռուսաստանի արտաքին քաղաքական շահերի դաշտդանության գործում:

Կուսակցության ամոլի ծառայության ղեկավար Ա. Արխիպովը հաղորդեց նաեւ, որ «դեկտեմբերին Բաղդադ է մեկնել լիբերալ-դեմոկրատական կուսակցության կողմնակիցների դատվիրակությունը, որը գլխավորում է դահեստի հակահետախույզը»: Դատվիրակության կազմում են նաեւ կուսակցության սվերային կաբինետի երեք նախարարներ: Բացի Իրաքի կառավարող կուսակցության հետ կապերի ընդլայնումից, դատվիրակությունը մտադիր է Ռուսաստան հասցնել Սադդամ Հուսեյնի հետ հեռուստահարցազրույցը, որը Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության կարծիքով, «Ռուսաստանի հայրենասիրական շրջանակներում դարձել է ԱՄՆ-ի դեմ դայքարի դրոշակակիր»:

Միաժամանակ Վ. Ժիրինովսկին ակնկալում է «Իրաքի ժողովրդի հանդեդ ԱՄՆ-ի քաղաքականության արմատական փոփոխություն»:

ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բիլ Քլինթոնին նրա հղած հեռագրում նշվում է, որ Իրաքի ներկայիս շրջափակումը «հակամարդկային է իր էությամբ, անհեռատես է արաբական աշխարհում կայունության հասատման առումով եւ երբեք ազատ ու անկախ ժողովրդի նկատմամբ հակաժողովրդական նդատակներին չի հասնի»:

Վ. Ժիրինովսկին իր ուղերձում ընդգծում է, որ Ջորջ Բուշի վարչակազմը «լրիվ չափով հաշվի չի առել Ռուսաստանի որդես Եվրոդայում, Մերձավոր Արեւելքում եւ Ռուսաստանի հարավային սահմաններում կայուն ժողովրդավարական խաղաղության երաշխավորի դերը: ■

Լուրերի Հոսք

Տաջիկստան. Հսկողություն վերաբերելի իսլամական կուսակցության վրա

Տաջիկստանի կառավարական զորքերը զինված խմբավորումներն իրենց հսկողության տակ են վերցրել Դուշանբեից 25 կմ դեռի արեւելք գտնվող Կոֆարնիհոն քաղաքը, ուր գտնվում է վերաբերելի իսլամական կուսակցության զինյալների հենակետը: Ինչպես նշել «ԻՏՆ»ին Տաջիկստանի ներքգործնախարարության լրատվական կենտրոնի ներկայացուցիչը, այժմ այդ քաղաքում «հաստատվել է հանգիստ իրավիճակ: Հրաձգությունները դադարել են»: Զոհվածների մասին տեղեկություններ այժմ չկան: ՆԳՆ-ի ներկայացուցիչը նշել է, որ Կոֆարնիհոնի շրջակայքում ռազմական գործողությունները «մեծ բարդությունների հետ էին կապված, յուրաքանչյուր կիլոմետրի ազատագրումը կատարվում էր դժվարությամբ»: Տաջիկստանի մուսուլմանների ղեկավարի նախկին օգնական, Քուվեյթի քաղաքացի Մուհամմադ Մուհամմադը չի բացառում, որ վերաբերելի իսլամական կուսակցության ուժերը հնարավոր է կիրառեն Պամիրի Բաղախշանի շրջանում: Մուհամմադ Մուհամմադը նշել է, թե Տաջիկստանի ժողովրդական ճակատի ղեկավար, քուլյաբյան խմբավորումների առաջնորդ Սանգակ Սաֆարովին դժվար թե հաջողվի գրավել Պամիրի շրջանը:

Նիկոլայ Տավկինը ՌԴԿ նախագահից դառնում է նրա «առաջնորդը»

Ռուսաստանի դեմոկրատական կուսակցության Մոսկվայում անցկացված 4-րդ համագումարը վարչության նախագահ ընտրեց Վալերի Խոմյակովին: Նախկին նախագահ Նիկոլայ Տավկինը բողեց այդ դաշտոնը, քանի որ ըստ Ռուսաստանի օրենսդրության դետական ծառայության մարմիններում աշխատողներն իրավունք չունեն լինել որեւէ գրանցված կուսակցության ղեկավար: Ինչպես հայտնի է, Տավկինը նշանակվել է Մոսկվայի Շախովյան շրջանի վարչության ղեկավար: Այնուամենայնիվ համագումարը նրան բողեց «դեմոկրատական կուսակցության առաջնորդի» դաշտոնը:

Կխմերներն ազատ արձակեցին ՄԱԿ-ի ուժիս զինվորների

Մեկ ամսում 4-րդ անգամ կարմիր կխմերներն ազատ արձակեցին Կամբոջիայում ծառայող ՄԱԿ-ի եւս 10 զինվորների, որոնց դատառնում էին դատել: Անցյալ ուրբաթ օրը նրանք ազատ էին արձակել 46 ՄԱԿ-ի հունգարացի զինվորների, որոնց առեւանգել էին նախորդ օրը:

Թբիլիսիում 110 հազար գործազուրկ

Թբիլիսիի աշխատանքի բորսայում երեքշաբթի արձանագրվել է 110 հազար գործազուրկ: Միեւնույն ժամանակ, ինչպես «ԻՏՆ»ին հայտնեցին բորսայում, այդ թվերը չեն արտացոլում իրավիճակը: Ենթադրվում է, որ Թբիլիսիում այսօր արդեն կա մոտ 300 հազար գործազուրկ: ■

ԱՐՄԵՆՍԵՖ

«ԱՐՄԵՆՍԵՖ» ընկերությունը առաջարկում է «Коммерсантъ» եւ «Финансовые и деловые новости» դարբերականների բաժանորդագրություն:

Եթե Դուք իսկապես գործարար մարդ եք եւ Ձեր ձեռնարկությունը նդատակադրվել է երկարատեւ ու արդյունավետ գործունեության, ապա Ձեզ դարգապես անհրաժեշտ են «Коммерсантъ»ում եւ «Финансовые и деловые новости»ում տպագրվող տնտեսական կանխագուշակումները, ամենաթարմ նորությունները, նոր մտահղացումները եւ բազմաթիվ այլ օգտակար տեղեկությունները:

Մենք երաշխավորում ենք այդ անհրաժեշտ ինֆորմացիայի առկայությունը Ձեր աշխատանքային սեղանին:

Մեր հաշվարկային հաշվին փոխանցելով ընդամենը 2980 ռուբլի եւ մեզ տեղեկացնելով, Դուք ամբողջ մեկ տարի ժամանակին եւ անխափան կստանաք «Коммерсантъ» եւ «Финансовые и деловые новости»:

Սկսեք Նոր տարվա առաջին աշխատանքային օրը վստահելի տեղեկություններ կարդալով:

Մեր իրավաբանական հասցեն՝
Երեւան, «Էրեբունի-2» հյուրանոց, 314 սենյակ, «ԱՐՄԵՆՍԵՖ» ՍՊԸ
հ/հ 467114 ՀԿԱԲԲ «Տաքեւ» բաժանմունք
բրդ/հ. 300166209 կոդ 370101302: Հեռ. 56.34.43, ֆաքս 53.29.69: ժամը 10:00-ից մինչեւ 12:00:
P.S. Եթե Դուք անծանոթ եք այս դարբերականներին, ապա Ձեզ անհրաժեշտ է զանգահարել եւ Դուք ամանորի առաջին համարը կստանաք առանց բաժանորդագրվելու:

PUBLISET

Հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ծեւավորման եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ՂԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տարան, Երեւան 23 Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65 Դասիչ 69149 Տպաքանակ 20 000 Պատուեր 1607 Ստորագրված է տպագրության 22.12.1992

digitised by A.R.A.R.@